



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ՁԱՐԾԱՅՐ ԲԱԶՄԱՆՑ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

❧ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 31 ՅՈՒՆՈՒԱՐ 1911 ❧

ԹԻՒ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Հաշուաւթեան խոտքեր	• • • • •	ՁԱՐԾԱՅՐ ԲԱԶՄ.
Ա. ԳԻՐԷՆ ՅՈՒՔԵՐ, երկու կոյրերը	• • • • •	ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԷՄԵԱՆ
Մաքրութեան խորհրդանշանը	• • • • •	ԸՆԴՈՒՇԱԲԹԻ ՆՊԻՍԵՐՈՅ
Գողանի ձայնի (քերթուած)	• • • • •	ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԷՄԵԱՆ
ՀԱՅ ՆԿԵՂԵՅԻՈՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ, Վաճառ Գողթնացի եւ իր ժամանակը	• • • • •	ԳԱԶՐԻԿ
Հագեւոյ Հալապի տի յեշտակին	• • • • •	Յ. Գ. ՄԱՐԿՐԵԱՆ
Հայաստան պատմական միաժողովին մասնաւոր առթիւ	• • • • •	ԽՄԲԱԳՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ, Ֆր. Բարէի - Հակումը՝ Մեղուծան Պարստեանէ	• • • • •	ԱՏԲՈՒՇԱՆ
ԱԶԳ. ԿԵՆՏՐՐ, Գրանիկ կարեւոր լուրերու: Արտաճանկի լուրեր Անտիպէն: Կաշ առ բարեւելոյ:	• • • • •	

ՏՊԱԳՐԱԿՈՒԹԻՒՆ "ՇԱՋԱՐ"

9, ճամի Գաբուսու, 9

Դ. Ա. Լ. Ա. Թ. Ի. Ա.

“ՏԱՃԱՐ”-ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան	40 դրու
Արաստահմանի համար	10 ֆրանկ
Ռուսիա	4 րուբլի
Ամերիկա	2 օլար
Ձեռքէ կը ծախուի սրակը	40 փարա

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփրա, Հայոց եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمفی کلیدساننده (داجار) غزته سی مدیری پاپاس زارماير

Rev. Père Zarnair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 31 ՅՈՒՆՈՒԱՐ 1911

ԹԻԻ 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԽՍՍԲԵՐ

Ահաւոր մզձառանջէ արթնցողի մը գոհունակութեան հառաչը արձակեցին ամէն անոնք, որ անցեալ եօթնեակին ուրախութիւնն ունեցան իմանալու ազգին հակընդդէմ կռուակցութեանց միջեւ հասկցողութիւն մը առաջ դալը՝ օրուան հրատապ հարցերուն վրայ:

Խոշոր թիւրիմացութիւն մը փարատած, պղտիկ խնդիրներու շուրջը հանուած մեծ աղմուկներու պատճառը ջնջուած, և ազգին իրական ցաւերու դարմանին ի խընդիր՝ համերաշխ ջանքերու տնհրաժեշտութիւնն հասկցուած ըլլալու յոյսն ունին ճշմարտապէս ազգասէր սիրտերը:

Ազգային Վարչական և Պատրիարքական տաղնապետին այս կամ ձեռով լուծումը, անխլխանութեան վիճակին ա՛լ վերջ դրած ըլլալու իրողութիւնը՝ մեծ բեռ մը վերցուցած է մեր սիրտերուն վրայէն:

Համերաշխութեան սեղանին վրայ զոհունակ եղաւ Ամին. Դուրեան Սրբազան, փափուկ զգացումներով բարախուն սիրտի տէր մեր Պատրիարքը, որ ապահով ենք

թէ ինք ալ գոհունակութեան անկեղծ հառաչ մը արձակեց, իմանալով վերջապէս ի գլուխ կշիւին այն համերաշխութեան, որուն գոյացման համար շա՛տ ջանքեր բրաւ, — տա՛ւ, ի դուր—իր Պատրիարքութեան վերջին շրջանին մէջ:

Ազգ. Ժողովը, իր վերջին (Յունիւլ. 21) նիստին մէջ, երկար ամիսներէ ի վեր առաջին անգամ ըլլալով խորհրդակցութիւններ կը կատարէր ազգին հանրական ցաւերուն, և առոնց ի դարման կատարուելիք դիմումներուն վրա: Առանայի վիճակին մասին տարածուած վրդովիչ լուրերը, առանձնաշնորհմանց մէջ եղած ոտնձգութիւնները, ազգային կրթական ինքնավարութեան վտանգի տակ դառնալը, հողային հարցը, և այլ բոլորին ի դարման կառավարութեան մօտ կատարուելիք դիմումներուն մէջ Ազգ. Վարչութեան ուժ տալու, օժանդակելու՝ ամէն ձեռնհաս անձերու պարտաւոր ըլլալը միաձայնութեամբ մէջտեղ նետուցեան կեդրոնի թէ ազատական երեսփոխաններու կողմէ հաւասարապէս:

Առաջին արդիւնքն էր այս՝ կնքուած համերաշխութեան, արդիւնք մը որ խօսքի սահմանին մէջ թէեւ, բայց չի դադրիր յուսալից ըլլալէ մօտաւոր ապագայի հա-

մար . բաւական է որ համերայխութիւնը շարունակուի , իր բովանդակ անկեղծութեան եւ անշահականութեան մէջ :

★

Այնքան երկար ատենէ ի վեր բաղձացում այդ համերայխութեան տեւականութեան նպատակը փոփոքը կը մղէ զմեզ մէկ երկու անկեղծ խօսքերով պարզել մեր հայեացքը՝ օրումն տաղնապալի կացութեան հանդէպ ազդին ամէն դասակարգերուն եւ կուսակցութիւններու դործունէութեան վրայ :

Բացայայտ է որ պահպանողական թէ ազատական կոչումը երկու հոծ զանգուածներուն կողմէ ամենաբոլորն յարձակումներ գործուեցան մէկ մէկու դէմ : Գաղափարի կոխը մինչեւ անձնականութեան տարուեցաւ , եւ թշնամանքներ տեղադրին փոխադարձաբար : Չափազանցութիւններ էին ատանք , — մէկ կամ միւս կողմէն ըսկաւած — որ իրենց փոխադարձը կ'ընդունէին իրաց շատ բնական ընթացքով :

Բայց այդ չափազանցութիւններուն տակ ճշմարտութիւններ կային ծածկուած :

Խօսելով մասնաւորապէս երբեմնի յեղափոխականներու բուն քննադատութեանց վրայ , պէտք է խոստովանիլ որ բոլորովին անիրաւ չէին անանք իրենց յարձակումներուն մէջ : Սրինտիկի համար , անշուշտ սխալ մըն էր իրենցմէ ոմանց այն հայեացքը թէ Եկեղեցին — Հայ Եկեղեցին — բանապետական հաստատութիւն մըն է , որուն դերը վերջացած է այլեւս ազգերու կեանքին մէջ , եւ այսուհետեւ ա'լ գոյութեան պատճառ չունի : Ո'չ նուազ խոշոր սխալ մըն է՝ եկեղեցականութիւնը — Հայ Եկեղեցականութիւնը — իր ամբողջութեան մէջ ժողովուրդը շահագործողներ , զայն կեղեքողներ , բռնակալներ նկատել : Այս կարգի անիրաւ յարձակումներու տրձագանքն էին կուսակցականներու ամբողջութեան դէմ ուղղուած նոյնքան բուն քննադատութիւնները , որոնց մէկ օրինակը կ'երեւէր Տաճարի անցիտ թիւին մէջ , Բարեկամական յօդուածագրի մը կողմէ , որուն անկեղծութիւնը մեզի համար վեր է ամէն տարակոյտ :

Եւ սակայն , կուսակցականներու նոյն քննադատութեանց մէջ ճշմարտութեան հիմ կը կար :

Եկեղեցական բարեկարգութեանց հարցը , որ Պատկ . Կրօն . Ժողովոյ անդամոց պահանջներով մէջտեղ նետուեցաւ , հաւատակ վերջերս ծայրայեղութեան տարուելուն , ինքնին կը ցուցնէր թէ Հայ . Եկեղեցին իր տաքիւրական պարզութեան մէջ դնելու , զիտակցարար եւ յաճախ անգիտակցաբար անոր մէջ մտցուած օտար սովորութիւններէ — թէեւ երկրորդական — մաքրելու անհրաժեշտ պէտք մը կայ : Ասկէ դուրս , — թէեւ անիրաւ՝ երբ բոլոր եկեղեցականաց վրայ տարածուի , — բայց ս'րքան իրաւունք ունէին եւ ունին ազատականք , երբ դատապարտութեան ձեւնոցը կը նետեն իրենց պարտականութեան զիտակցութենէն դուրս , ստուգիւ շահախնդիր եկեղեցականներու հասցէին , եւ իրենց արհամարհանքը՝ ամէն անոնց դէմ որ ուսման անհրաժեշտ պաշարը չունին ժողովուրդն առաջնորդելու համար , որոնք մանաւանդ անտարբեր են իրենց մօքի ու սրտի յառաջդիմութեան համար , իրենց լուսնական վարդապետան համար :

Քննադատութիւնը իր անիրաւ չափազանցութիւններէն մերկացուելով՝ բարեբար դեր մը ունի միշտ ընկերային յառաջդիմութեան գործին մէջ , եւ նոյն իսկ այդ չափազանցութիւնները՝ գրգռու կ'ըլլան լծացած միտքի , ընդարմացած , բթացած ուղեղի տէր հոգիներուն , շարժելու քիչ մը , թօթափելու իրենց թմրութիւնը , ըլլալու կենսունակ , դործօն , տուրք տարր մը իրենց պատկանած շրջանակին մէջ :

Եթէ ճշմարտիւ կը սիրենք մեր ազգն ու Եկեղեցին , — մասնաւորապէս Հայ Եկեղեցականութեան ուղղելով մեր խօսքը — , պէտք է շնորհակալ ըլլալ կուսակցականներու նոյն իսկ յախուռն քննադատութեանց համար , որ զմեզ սթափեցնելու պէտք է ծառայեն , եւ մենք ցաւ պիտի իմանայինք , եթէ գոյացած համերայխութիւնը պատճառ ըլլար զադրեցնելու իրենց քննադատութիւնները :

Մնաց որ կուսակցականք իրենց —

հիմնաւոր թէ անհիմն — քննադատութիւններով այնքան կազդուելիզ դեղի մը ազդեցութիւնն ընելէ զատ, ուրիշ շատ կերպերով ալ ունեցան օգտակար դեր մը: Անոնք բերին մեղի կազմակերպութեան ոգին, զգացուցին մեղի՝ զազափարի մը շուրջը հաւաքուելու պէտքը, միեւնոյն նպատակին հասնելու համար զազափարակից անձերու միեւնոյն ճամբով յառաջանալու անհրաժեշտութիւնը, և բազմացուած արդիւնքը ձեռք բերելու համար ի հարկին անձնական զգացումներն և հակամիտութիւնները զոհելով՝ միակ պետի մը հրահանգին հետեւելու օգտակարութիւնը: Մէկ խօսքով՝ հակառակ իրենց շարքերէն դուրս գտնուողներու հանդէպ անոնց բռնած ընթացքին, իրենց շարքերուն մէջ հիանալի օրինակ մը կուտան մեզ կարգապահական ոգիի, այն աստիճան որ իրենց պետին բերնէն ելած իւրաքանչիւր բառ պատգամ մըն է անդառնալի, հոգ չէ եթէ այլաբանի ամէնէն անհեթեթ, absurde խօսքն իսկ ըլլայ:

Ուրիշ օգտակարութիւն մը, զոր բերին մեղի կուսակցականները, լսարանական կազմակերպութեանց նախաձեռնութիւնն է զոր ունեցան, առաջին անգամ որ ազատութեան հետ մէկտեղ եկան հաստատուեցան համարձակօրէն Թուրքիոյ մայրաքաղաքին և զանազան գաւառներուն մէջ: Անկախապէս և անկախաւոր կուսակցական այս կամ այն շէնքին կամ ընկերին բանախօսութեան, անշուշտ չենք կրնար բնի թէ լաւադոյն, չինիզ զազափարներ տարածեցին ժողովուրդին մէջ: Ընդհակառակն իրենց պարզած սկզբունքներուն մեծ մասը՝ Եւրոպական ամենէն ծայրայեղ տարրերով արգաստեղծութիւններէն քաղուած՝ խաղաղ անյարմար էին մեր միջավայրին, և քայքայիչ, կազմալուծող ազդեցութիւն մը յառաջ կը բերէին Հայ ընկերային և ընտանեկան կազմակերպութեան մէջ: Եւ սակայն նոյն բանախօսութեանց բոլորն ալ այդ քայքայիչ ազդեցութիւնը չեն ունեցած: Ժողովրդեան միաքն ազատ զազափարներու, ճշմարտութեան լոյսին տուելու քայլով ուշադրաւ հրապարակախօսութիւններ ալ հաղուադէպ չեն եղած: Մասնաւոր

իրենց նոյնիոկ վնասակար հրապարակախօսութիւնները անուղղակի օգտակարութիւններ ունեցած են, առիթ տալով ընդգիծադիրներու՝ նոյնպիսի հրապարակախօսութիւններով հերքելու, ծաւալել ջանացուած սխալ կարծիքները: Եւ զազափարներու ընդհարումէն է որ լոյսը կը ծագի:

Կեդրոնի կուսակցութիւնը, որ լայնամիտ պահանջատեղականութեան և հանրային ողջմտութեան ցոլացումն է ըստ մեզ, անուղղակի ծնունդն է կուսակցականներու ծայրայեղ պահանջումներուն, կոչուած ըլլալով կազմակերպեալ ուժով մը դիմադրելու նոյնքան կազմակերպուած ուժով մը ելած անխմատ պահանջումներուն:

★

Ահա՛ երկու բառով ինչ որ կը խորհինք կուսակցականներու գործելակերպին վրայ: Անշուշտ համամիտ չենք իրենց շատ մը զազափարներուն, ոչ ալ իրենց քաղաքական: Բայց ատիկա չի նշանակեր որ իրենց բոլոր զազափարները ծուռ են և ազդաշնորհ: Անոնք՝ իրենց չափազանցութիւններով՝ հանդերձ՝ ունին իրենց ահադին օգտակարութիւնը, զոր անտեսել նոյնքան ահադին սխալ մը պիտի ըլլար:

Բայց եթէ խոշոր թիրուծիւն մը պիտի ըլլար անտեսել կուսակցականներու լաւ կողմերը, նոյնքան մեծ պակասութիւն մը պիտի ըլլար այս վերջիններուն համար, եթէ շարունակէին իրենց պէս չմտածողները նկատել յետադիմականներ, շէրիաքներ, բռնապետութեան կողմնակիցներ, շահամուտներ, և որ իր կարգին: Հայեցակէտներու տարբերութիւնը անպատճառ չարաչափութիւն չենթադրեր: Մարդ կրնայ սխալիլ, բայց նորէն անկեղծ ըլլալ իր համոզումին և նոյն իսկ իր սխալին մէջ: Ատիկա ճշմարիտ է բոլորն ազատականին և լայնամիտ պահանջատեղականին համար հաւատարմապէս:

Խնդիրը, ուրեմն, կը կայանայ զազափարի բարձրութեան վրայ մնալու մէջ, փոխադարձ յարգանքի և բարեկրթութեան տարրական պայմաններուն յարգուելուն մէջ: Գազափարի ամենէն խորունկ տարբերութիւնները կրնան հարթուիլ կարծիքներ

րու խաղաղ փոխանակումով մը, և ամենէն աւելի՝ հանդարտօրէն կատարուած վիճաբանութիւններն են որ լոյսը յառաջ պիտի բերեն:

Եղբակացեալու համար, ուրեմն, այս համեա տողերը, մենք պիտի փափաքէինք որ աղատական տեսար, — որոնց համերաշխ գործունէութեան վրայ բացարձակ վստահութիւն ունինք՝ մասնաւորապէս յարաբերական գործերու կարգադրութեան մէջ, — ազգային ներքին կեանքին մէջ ալ՝

Չափաւոր և չըջահայեաց ըլլալին՝ իրենց քննադատութեանց մէջ, մասնաւորներու զեղծումը չվերադրելով ընդհանուր դատակարգի մը:

Պատկառ կենային Ազգ. Սահմանադրութեան սառնին և ողւորին, չներելով՝ ներկայ Բոլիքի Ժամանակին մէջ՝ անոր ամէնէն անշունչ մէկ տրամադրութեան փոփոխման, որ գուցէ առիթ պիտի դառնար ուրիշ այնպիսի փոփոխումներու որոնց դէմ ամէնէն աւելի իրենք պիտի բողոքէին, գուցէ ապագիւն կերպով:

Համոզուած ըլլային թէ Ազգ. Եկեղեցւոյ պահպանումն և զօրացումը անհրաժեշտ մէկ պայմանն եղած է — և տակաւին է — մեր ազգային դոյութեան, և անոր դէմ ուղղուած ունէ հարուած կը փետտէ նոյն ինքն մեր ինքնուրոյն կողմակերպութեան:

Վստահ ըլլային, վերջապէս, թէ Հայ եկեղեցականութիւնը սկիզբէն ի վեր անմասն գտնուած է տիրապետողի ձգտումէն, որ կը յատկանշէ օտար մէկ կրկու Եկեղեցիներու հողեւորականութիւնը, և ընդհակառակն նոյնացած է ժողովուրդին հետ, միասին կրկնով անոր վրէժն ու նեղութիւնը:

Անշուշտ՝ բացառաբար՝ զեղծանողներ, սխմանակներ կան միշտ, որոնց դէմ ուղղուած ամենաբոլոր քննադատութեանց ջերմապէս համամիտ է ճշմարտապէս քրիստոնեայ ամէն հողեւորական:

Բայց եթէ նոյն իսկ այս հիմնական կէտերուն մէջ ունին կարծիքի տարբերութիւններ, մենք կը կարծենք որ ատենք ևս կրնան կարգադրուիլ հանգարտ վիճա-

բանութեամբ՝ կատարուած փոխադարձ յորդանքի և բարեկրթութեան պայմաններու մէջ:

Օ'ն, ուրեմն 'ի գործ:

ԶԱՐԲԱԹՐ ԲԱՀԱՆԱԾ

Ս. ԳԻՐՔԷՆ ՅՈՒՔԵՐ

ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐԸ

« Զինչ կամէր զի տարեց ձեզ,
Տէ՛ր, զի բացցին աչք մեր »:
(Մատթ. Ի. 31-32)

Յիսուս արդէն վաղուց սկսած էր հրապարակային գործունէութեան: Ռարբխնուրուն Ս. Գրոց քնածին մեկնութիւններով օրօրուող ժողովուրդները, այլևս ձանձրացած կեանքի աննպատակ միօրինակութիւնէն, մասնաւոր ի տես բարոյականութեան ընդհանուր անկման և անարդարութեան բխաւ տիրապետումին, արդարութիւնը գտնելու տենչէն մարկուած՝ կը հետեւէին Անոր, որ կանխագուշակուած էր իրենց նախահայրերէն:

Արդէն նախագուշակուելու եկած էր, և իր հրապարծութիւնը, արդարութիւնը աւետող ձայնը արձագանգած էր Պաղեստինի ամբողջ կողմերը, ուրկէ ամէն սեռէ ու ցեղէ մարդիկ գունդ ի գունդ կը դիմէին ունկնդրելու համար անոր:

Յիսուս արդէն բազմաթիւ զիւղերու և քաղաքներու շրջանը ըրած՝ Նրիքով եկած էր, ուրկէ կ'ուղէր ելլել Նրուսաղէմ:

Մէկ կողմէն « յիւրան եկն և իւրքն զնա ոչ ընկալան » ի դառն լրականութիւնը, իրեններէն հասկցուած չըլլալուն վիշաք, և միւս կողմէ մօտալուս մահուան կսկծեցուցիչ մատնագութիւնը, ատենք ամէնքը իրարու միացած՝ կը վրդովէին իր հողւորին խաղաղութիւնը, և կը խաչատուէր իր միտքը՝ տիուր գաղափարներով:

Այրիները, որբերը, վշտացեալներն ու հարստահարեալները միմիարով, կեանքի վնհ սկզբունքներ քարոզող իր լեզուն չէր միայն, որ այնքան մեղամոգձուս շնչաւով

մը կ'ըսէր աշակերտներուն. «Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և որդի մարդոց դատարարանայի ի մահ»։ Իր Աստուածային ջինջ դէմքին վրայ ալ ուրուադծուած էր մօտաւոր մահուան ստիճած տխրութիւնը։

Երիքով հասած էին։

Յորդանանու գեղածիծաղ ափերուն թովանքը, Երիքովի բնական գեղեցկութիւնները, արմաւենիներու զով չուքն ու թարմ սիւքը և աշակերտաց գուրգուրալից վերաբերումը պահ մը փարատած էին իր դէմքին կնճիւնները։ Այդ եղեմական միջառային ներգործած ուրախալից տպաւորութեան ասկ, Երիքովէն դուրս ելած տակն ճամբուն վրայ կը հանդիպի երկու կոյրերու։ որոնք Յիսուսի անցնիլը լսելով կ'աղաղակին. «Ողորմամիտ որդի Դաւթի»։

Ասոնք, թէպէտ քստ մարմնոց կոյր, Բրիստոսի սքանչելիքները չէին տեսած, բայց գործուած հրաշքները լսած ըլլալով մտաց հաւատոյ աչքերնին բաց էր։ Եւ որովհետեւ Ս. Դիրքէն և Եռայեայ մարգարէութենէն գիտէին թէ Մեսիան պիտի գայ Դաւթի ազգէն և կոյրերու աչքերը պիտի բանայ. այս վկայութիւնը և եղած հրաշքները բաւական էին զիրենք համոզելու թէ նա է մարգարէին Օծեալ Փրկիչն, որով աներկբայ հաւատքով, Դաւթի որդի անուանելով աչքի լոյս կը լսնդրէին։

Կանգ կ'առնէ Յիսուս, իր քով կը կանչէ զանոնք և կը հարցնէ.

— Զի՞նչ կամիք զի արարից։

Անմիջական արատախանը կ'ըլլայ կոյրերուն.

— Տէր, զի բացցին աչք մեր։

— Հաւատայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ։

— Ա՛յո, Տէր, կը պատասխանեն կոյրերը։ Յիսուս հասնողով իսկոյն անոնց հաւատքին անկեղծութեան չափանիշը կը մերձեցնայ յայս նոցա և կ'ըսէ.

— Ըստ հաւատոյ ձերոց եղիցի ձեզ։

«Եւ բացան աչք նոցա»։

Կը բացուին կոյրերուն աչքերը. բայց Յիսուս ստատելով կ'ըսէ. «Զգոյ՛՛ կոյցէք, մի ոք գիտապէս»։ Յիսուսի այս ստապ «առ տօնի հրէից» չէր, այլ իր միակ նը-

պատակն էր հետի մնալ մարդոցմէ եկած փառքերէն ու պատիւներէն։ Իրեն համար կարեւոր էր իր Հօրը գնահատումը և փառքը։ Կոյրերը՝ սակայն՝ այդ երկրի բոլոր սահմաններուն մէջ համառուցին Անոր անունը և մեծ սքանչելիքը։ Աստուած ինքնին կը թոյլտարէ արգէն, որ իր գործերը փառաւորեն մարդիկ, և հռչակին ի սիրւոս աշխարհի։

Երկու կոյրերը չառ խորհրդաւոր և միանգամայն ճշգրիտ պատկերացումով մը կը ներկայացնեն կարծես ընդհանուր մարդկութիւնը, որ աս'՝ վիշտի հովտին ճամբուն մէկ եզերքը նստած, զթուլիւն և օգնութիւն կը գոչէ։ Ո՛րքան զիտւններ, որքան փրկիտիւններ, որքան օրէնադիրներ և բանաստեղծներ եկած անցած ու չեն կրցած պատասխանել այդ աղաղակին։ Եւ պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ հաւատաքի չգոյութիւնը։ Ամէն Բրիստոսեայ երախտապարտ է Բրիստոսի, մասնաւորապէս կոյրերու այս բժշկութեան համար։ Մենք ի բնէ ի մեզս ծնեալ ենք. ամէն բանէ աւելի հակամիտութիւն ցոյց կուտանք զերի ըլլալու մեր կիրքերուն. արդարութիւնը անտեսած և բանականութեան ազօտ լոյսին հետեւած ենք շարունակ։ Այս վիճակին մէջ սակայն յուսահատ չենք բնաւ. որովհետեւ մեզքի այն թանձր մշուշը, որ պատած էր մեր աչքերը, կը փարատի իսկոյն, երբ Յիսուս իր հրաշագործ ձեռքերը մօտեցնէ մեր աչքերուն, ինչպէս ըրաւ Երիքովի կոյրերուն։

Կոյրերու պատմութեան մէջ մասնաւորապէս երկու աչքաւառ գիծեր կան։ Նոյն իրենց ձայնը լսել տալու համար բարձրացած աղաղակնին, և երկրորդ ամբոխին սոստը. «Եւ ամբոխն ոստտեաց նոցա զի լսեցին»։ Հատուապէս և յարատե հաւատաքը ստաթուր կը կոխէ ամէն խոչընդոտ։ Անձկութիւնը օգնութիւն ինդրելու կը մղէ զմեզ, բայց աննկուն կամքը միայն կրնայ գիմարել այն դժուարութիւններուն, որ արդիւք կը հանդիսանան հայցուած օգնութեան։ Նշանակելի է նաեւ կոյրերուն պատասխանին վճռական հանգամանքը.

Յիսուս կը հարցնէ. «Զի՞նչ կամիք զի

արարից ձեռք» : Կոյրերը սուանց այլ և այլի, ուղղակի կը խնդրեն ա՛յն ինչ որ անհրաժեշտ էր իրենց . «Տէր զիբացցին աչք մեր» : Հաւատքն էր որ կը մղէր զիրենք այդ կերպ խօսելու, և այդ հաւատքին ազդեցութեան տակ անոնք բնաւ չէին տարակուսեր . ընդհակառակն վստահ էին թէ Յիսուս պիտի տար իրենց խնդրածը : Մինք ալ ուրեմն կոյրերուն միեւնոյն հաւատքով և աներկբայութեամբ խնդրենք Յիսուսէն որ բանայ մեր մաքին և սրտին աչքերը . և անոնք պիտի բացուին :

ՍՈՒՐԵՆ ՎՐԴ. ԳԱՆԷՄԵԱՆ

Սկիւտար

ՍԱՔՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ

1911 Յունիս 20 . ՆԵ :

Ա՛լ անտանելի է այսօրուան ցուրար . սառեցնող, ընդարմացնող ցուրար : Առտուն արթնցայ . խուցիս մէջ սանդիկրատ ջերմաչափի անդիկը քաշուած, խտացած էր իր գնտաձեւ խցիկին մէջ, ծայրայեղօրէն մեկով անշուշտ : Ձէի գիտելի թէ զերօրէն վար քանի՞ աստիճան համրելու էի : Ձիւնի վրայ գիշերուան եղեամբն ալ աւելցած էր : Մերկ ծառերու տատերն ու ճիւղերը գիրգացած էին բամպակային փափկութեամբ, նրբաթել, ճարտարարուեստ հիւսուածքով, պարզելով հրաշալի անձեռագործութիւն մը : Բայց անա՛ւ արիւը ծայր կուտայ, իր շողերը կ'արձակէ շաղերու և ցօղերու սառնութեան վրայ : Խոչ օգուտ սակայն, ձմեռն արեւն է այդ . ջերմին չէ . և կարծես ինքն ալ կը մտի, կը դողդողայ ձեռն տիրապետութենէն, որ արձակ համարձակ, ճերմկեցուցած է ամէն կողմ : Այս պաղուկ, անուշիկ արեւը սակայն բնութեան հիանալի մէկ գործողութիւնը տեսանելի կ'ընէ հետախոյզ աչքերու : Սաստիկ ցուրտին մաղմուղած ցօղերու թեթեւ, անշուշտ տեղացու մը կը լուսաւորէ այդ անուշիկ արեւը, և դուն կը կարծես սեւանել արծաթի զանակներ, բարակ, շողշողուն, որոնք կ'իջնեն երկինքէն շատ շատ, անբաղար, Ձիւնի և

ցուրտի ոյսպիսի տիրապետութեան անշուշտ տիրապետութիւն մըն ալ պահած եմ Հայաստանի լեռներէն, Բաւնի ճամբով Մուշէն Կարին բերուելու տուն, 1899 թ. վերջը :

Հայաստանի բնական և պատմական այդ ձիւները այս տարի Անտառու փախադրուած են կարծես, յանկարծակի բերեւելով հարուստն ու աղքատը հաւասարապէս, որոնք վարժուած թեթեւ ձմեռն մը բուրս պատահականութիւններուն, պատրաստուած չէին այսպիսի վերահաս խտութեան մը : Եւ արդէն լրագիրները կ'ըսէին թէ ամէն կողմ գրաւուած է ձիւնը, ամէն կողմ տիրապետած է : Արդեօք այդպէս է : Հայաստանի խեղճութեան և թշուառութեան շափը մեղմացնելու համար ձմեռն ու ցուրտը փոխադրած է ուրիշ տեղեր : Չգիտեմ . . . : Գիտեմ միայն թէ Անկիւրիոյ համար բոլորովին տարօրինակ է այս տարուան ձիւնն ու ձմեռը, և լաւ յիշողներ կ'ըսեն, թէ դոնէ քսան տարի ետ պէտք է երթալ այսպիսի ձմեռ մը դանդաղ համար :

Դեկտ. 31 էն ի վեր պարբերաբար կը ձիւնէ : Ամանորը մաքուր խորհրդաւորութեամբ մը ճերմկեցու : Այն օրէն ի վեր ինչպէս որ ցուրտը թոյլ չտար որ աշխատիմ առանց նեղուելու, նոյնպէս ձիւնը կը ներշնչէ ինձ բաներ մը՝ երբ պատուհանէս դիտեմ անոր անձայրածիր, մեծայաղթ տիրապետութիւնը : Խուցս կը գտնուի Ս . Խաչ կամ Ս . Կղիմէս Եկեղեցւոյ բակին մէջ, Անկիւրիոյ նշանաւոր Հիսարիմ (=Պարիսպ) ճիշդ դրան վրայ(*) : Խուցիս

(*) Անկիւրիս երեք պարիսպներով շրջապատուած բերդաքաղաք մըն է : Իսկ քաղաքին զիւրքը բնական ամրոց մըն է արդէն՝ դաշտէն 100 մէթր բարձրութեամբ : Այս բնական ամրոցը աւելի ևս ամրացուցած են երեքպատիկ պարիսպներով . առաջինը կը պատէ Անկիւրիոյ բերդը, որ սարէն գլուխն է : Երկրորդը միջին պարիսպն է, որ կը պատէ բ'ըրին ստորոտը, և այս պարիսպին դրան վրայ է խուցս : Իսկ վերջին երրորդ պարիսպը, որ քաղաքը կը պատէ եղբւ, փլած է, որուն հետքերը սակայն որոշ կ'երեւին քաղաքէն Կարմիր Վանք տանող ճամբուն վրայ, բանջարանոցի առաջին արտին մէջ :

արեւմտեան միակ պատուհանը, բացուած պարիսպի հաստաքեւտ պատին վրայ, կ'ընդգրկէ ազատ, բացարձակ տարածութիւն մը, այսինքն՝ Անկիւբիոյ ստորին մասը, դաշտը, Երկաթուղիի կայարանը, Ազ-Քէօիբիւն, որու տակէն կը գալարուի կ'երթայ Կարմիր-Վանքի առջեւէն հոսող Չըպլզ-Չայը, եւ հեռուները հորիզոնը, որ կը գծուի կայառող բլուրներով: Եւ այս բովանդակ ընդարձակութիւնը՝ տարուան սկիզբէն ի վեր միապապաղ սպիտակութեան մը վերածուած, ՄԱՔՐՈՒԹԻԵՆԸ կը խորհրդանշէ աչքիս առջեւ:

Անկիւբիա, այս շատ անհարթ, սցա շատ ազոտոտ քաղաքը, ծածկուած է ձիւնով: Փողոցներու բոլոր ու փոքր սողարկումը, որ անպատճառ կը տանջէին ռուքերը, սեւցած մամուռ բռնած կ'զմայարաւոր տանիքները, որ աչքը կը խայթէին, եւ մարգերն ու ճահճները, որոնք տնեղի եւ ջերմի մանրէներով կը թռնաւարէին մարդիկը, եւ լեռներն ու բլուրները, որ իրենց անջրդի, գարշ անհարթութիւններով տիրութիւն մը կը տարածէին, վերջապէս ամէն բան, ձիւնի վեհափառ տիրապետութեան տակ ձուլուած,՝ միացած սպիտակ, մաքուր, ամբողջութիւն մը եղած էին հիմայ: Եւ այս մաքրութեան վրայ սեւեռած՝ կը խորհէի, թէ ի՞նչու համար բնութիւնը չէն ուսումնասիրել մարդիկ. բնութիւնը, որ իր բնութեամբ գեղեցկութիւններով պիտի մաքրէր իրենց միութիւնն ու ներդաշնակութիւնը խանդավառ պատճառները:

Ձիւնի սպիտակութիւնն եւ գեղեցկութիւնը, ամբողջ բանաստեղծութիւն մըն է եւ խորհրդանշանը մաքրութեան: Կուսական անմոռութիւնն ու անբռնութիւնը չէ՞ որ մաքուր սպիտակութեամբ կը խորհրդաւորուի: Քրիստոսի Այլակերպութիւնը կամ Պայծառակերպութիւնը ձիւնի սպիտակութեամբ է պատկերացում: Մկրտութեան լոյսով սրբաշունչներու պատմութեանը՝ սպիտակութեամբ կը պայծառանայ: Յարութեան աւետիքը սուղոյներ՝ ձիւնափայլ ճերմակութեան զգեստը զուարթունք էին: Եւ լոյսը ինքնին, տրեւի սպիտակ

լոյսը, եօթներկեան լոյսերու միաւորութիւնը չէ՞: Չէ՞ որ հալացի մէջ նետուած մետաղներն իսկ չէն մաքրուիր, մինչեւ որ չէկ բոցավառութիւնը չճերմկնայ, այսինքն մինչեւ որ չհասնի մաքրող եւ զտող առքութեան կատարեալ ստորճանին:

Մաքրութիւնը վերջին տախտակի տաքութեան մէջ, նոյն մաքրութիւնը վերջին տախտակի տաքութեան մէջ, միշտ սպիտակ է, սա՛ ձիւնափայլ սպիտակութիւնը, որ վերցուցած է ամէն ազոտութիւն:

Եթէ մարդիկ իրապէս լաւ գիտնային կեանքին արժիքը, պիտի աշխատէին, որ կիրքերը պաղին սա՛ ցուրտին պէս, եւ ՍԻՐՈՅ մաքրութիւնը տիրապետէ իր սպիտակափառ շքեղութեամբ, ձիւնապատ լեռներէ հանգոյն, վե՛ր վե՛ր ամէն նկատումներէ, նման մեր պանծալի Արարափին, որուն գաղտնի միշտ մաքրութիւնը կը խորհրդանշէ, եւ կ'ասէ վարը, ստորնութիւններու մէջ գործուած կեանքը արտատուորող իրերը:

Յուրաք, պաղը գէշ է, երբ սա՛ փոքրիկներու ձեռքերը կապ կապոյտ կտրած կը լացնէ փողոցներու մէջ. փոքրիկներ որ լալով դպրոց կ'երթան՝ բերնի չնչով տաքընեկով իրենց մարմինները՝ ցուրաք, պաղը անտանելի է՝ երբ կ'ստիպէ զիս, որ միշտ զրիչս վար ձգեմ եւ Նզիչէի նկարագրած մագերուպէսիւցիստորուշանովաւ պահեմ ցուրաք, պաղը գէշ է, երբ մարդիկը կ'ըստորոգէ, « Ի՛նչ պաղ մարդ, ի՛նչ պաղ պաղակ արտած » ըսելու տախտակ. ցուրաք, պաղը գէշ է, երբ կ'արտաքսէ Սէ՛ր իր բոյնէն, մարդկային սրտերէն, եւ ինքը՝ պաղութիւնը՝ կը բնութեանայ հոն, եւ երբ մարդիկ սկսին ապթաքիլ՝ սա՛ սառերուն վրայ տկամայ փռուող գայթակներու եւ ինկոյններու պէս, որոնք անպատճառ ցուրտ, փոքրիկ սկիթուք մը կը փառանդեն իրենց անկումէն. ցուրաք, պաղը գէշ է, երբ թշուառութիւններն ու խեղճութիւնները կ'արձանացնէ — , անպատասպար արնակներու մէջ, ուր ոչ տաք թմիր մը կայ, ոչ ալ կենսաբեր դժու մը տաք տաքութիւն: Սյս տեսակ ցուրտ մը, պաղ մը

դէշ է, և ևս սրտանց կ'ըզձամ որ աղքատութիւնը, չքաւորութիւնը աւելի ևս չսարսափին սարսնցմով: Բայց լա՛ւ է, հիւանալի է ցուրտն ու սպալը, երբ ձիւնը կը կերտուի ատով սա տիեզերական աշխատանոցին (Laboratoire) մէջ, և երբ ձիւնը կը ծածկէ ամէն ագեղութիւն և ազատութիւն, խորհրդանշելու համար զեղեցկութիւն մը համատարած և մաքրութիւն մը բացարձակ, կազմելով մարդոց համար ամենէն աւելի զգաստացուցիչ և կրթիչ ԴԱՍ մը:

Օրհնեալ ըլլայ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ, գեղեցկութեան, սպիտակութեան նախասիւսը, որուն պէտքը մինչեւ աւելի Բնութիւնը կը զգայ մեզի համար, և երկար ատեն մեր աչքերուն առջեւ կը փայլեցնէ զայն Զիւնի վեհափառ խորհրդանշանով:

ԱՆԿԻՒՐԻՍ

ԲԱՌԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԱՂՏՆԻ ԶԱՅՆԵՐ

Բնութիւնը կը խրատէ, լսել կուտայ ամենուրեք իր ձայնն անոյշ ու բեկբեկ: Լուրթ երկինքի խորերէն ճաճանչող արեւը հուր կ'ըսէ. եղի՛ր դուն մաքուր: Սաստիկ հովերուն ներքեւ թփեկն գողգոջ ու տկար կ'ըսէ. եղի՛ր դուն արդար: Երկնից վերեւ սաւառնող սա՛ արծիւը ամպահեծ կ'ըսէ. եղի՛ր դուն միշտ մեծ: Իր փեթակը յարգաշէն՝ մեղուն մեղրով լեցնող կ'ըսէ. եղի՛ր աշխատող: Եղանակին պտուղներ տուող ծառը հաստ, արի, կ'ըսէ. եղի՛ր դուն բարի: Սափերն կ'ըսէ. գիտցիր որ չկայ մի բան արհամարհ ինքնին ես եմ աւագ, քար: Ամբողջ օդը յար խնկող, փթեղ ծաղիկն անարգել կ'ըսէ. գիտցի՛ր դուն սիրել: Դեռ կ'ըսէ. ընտրէ՛ խութն, որուն պէտք է հետեւիլ Ու գիտցիր դուն ապրելի: Տերեւն կ'իշխուի կ'ըսէ. տե՛ս ամեն ինչ պիտ' խոտի եւ հունկ ապա պիտ' մեռնի: Դեռ ու արեւ, մեղու, ծառ, վարդ, տերեւ ամէնքն համբուն

Միշտ կ'ըսեն, մա՛րդ եղի՛ր դուն:

Թարգմ. ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԻՄԵԱՆ

ՍԿԻՒՏԱՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ս. ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

ԵՒ

ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ (*)

Երկու դարերէ ի վեր Գողթան երգիչները արդէն բոլորովին լւաժ էին: Եւ եթէ մեր թուականին ութերորդ դարուն տակաւին գոյութիւն խի ունենային անոնք՝ ամբողջ ժողովուրդի մը աղետուր հաւաքանքներէն եւ իրենց զիւցաղն իշխանին ապաշխարութեան ողբերէն ուրիշ ձայն չպիտի արձագանգէր իրենց բանթիւններէն:

Եթէ աղգի մը բարօրութեան օրերուն կը ծաղկին զիւցաղներդակներ, զփախտութեան չըմաներու համար ալ չեն պակսիր երեմիականներով հիւսուած ողբերգութիւններ: Այս վերջիններէն է անտարկոյս 746 թուականին Բղնունետց Երաշխաւոր Վանքի (1) վանահայր Արտուազդ վրդ.ի յօրինած մէկ հիմնադր ներքաղը (2) իրեն ժամանակակից վկային՝ Վանան Գողթնացիի վրայ:

Պատմութիւնէն յայտնի է շատերուն թէ Հայաստան Պարթիկներու տիրապետութիւնէն երբ անցաւ Արաբներու իշխանութեան ներքեւ, այս անգամ կուտախնձոր

(*) Յունվար 23, ԳՂ, Հայ Եկեղեցին տօնեց Ս. Վահան Գողթնացիի յիշատակը: Այս առթիւ հաճոյքով կը հրատարակենք հայ մարտիրոսին եւ իր ժամանակին վրայ շահեկան յօդուած մը գրուած հմուտ արմաշականի մը կողմէ, որ առ համեմատութեան «Գաղթիկ» Մոսկուտեան տակ կը թարգմտէ, եւ որ խոստացած է հայ Եկեղեցւոյ պատմութիւնէն սրտագրաւ եջեր ներկայացնել «Տաճարի ընթերցողներուն, օգտուելով ներկայացուած ամէն առիթէ: Ե. ԽՄԲ.

(1) Հիմայ կը կոչուի Աթանշեալգործ՝ որ Վանայ ծովուն հիւսիս-արեւմտեան ծայրը կը գտնուի:

(2) Հրատարակուած 4834ին Վենետիկ, «Սոփերէի ԺԳ» հատորով:

մը եղաւ Յոյներուն եւ Արաբներուն միջեւ :

Մեր թշուառ նախահայրերն ստիպուած էին երբեմն այս երբեմն այն կողմ հարիլ՝ իրենց նախատիրութեան եւ շահուն համաժառ : Վահան Գողթնացիի ծնած տարիներուն (700-702) Հայերը անխոհեմարար կը պատերազմէին իրենց նոր տիրապետներուն՝ Հազարապիներուն դէմ, միշտ պարտուելով եւ ահագին վնասներ ու կորուստ տալով : Սակայն որպէս զի Հայերու խլրտումները վերջնականապէս դադարին, Արաբ Վլիթ Ամիրապետը հրամայեց անձիտել եւ թերեւս բնաջինջ ընել Հայ ազնուականութիւնը : Այս մեծուքը գործադրողներէն մին եղաւ Նախիջեանի Գասրմ զօրապետը, որ իսպականքով իր մօտ հրաւիրեց Հայ մեծամեծները, եւ երդում ու դաշինք հաստատելու համար Եկեղեցի տանելով՝ շատեր այրեց, եւ մաղաղութ ազատողներն ալ սրտկոտոր բռաւ : Այս ջարդին զոհ գացողներէն մին էր Վահան Գողթնացիի հայրը՝ Ստարով իշխան : Իր եւ 500 ուրիշ բարձակիցներու մատաղ սերունդը զերուեցան ու տարուեցան Գամսակոս՝ ուր ընդունեցին իսլամական դաստիարակութիւն : Ասանց մէջ իր ազնուականութիւնով, իր գեղեղկութիւնով եւ իր մտաւոր կարողութիւններով ամենէն աւելի փայլեցաւ Գողթնաց Ստարով իշխանին պոչաղատը՝ որ իր ձիրքերով ալ արժանաւոր զիրք զրաւեց Ամիրապետի արքունիքին մէջ՝ վարելով զԷւսնաբարութեան կամ քարտուղարութեան պաշտօնը :

Թէ՛ Վլիթ ամիրապետին եւ թէ՛ իր յաջորդ Սիւլէյման եւ Օմար խալիֆաներուն օրով այնքան զարգացաւ եւ յառաջացաւ Բաքիպ Վահապը (ինչպէս կը կոչէին զինք իր նոր կրօնակիցները), որ երբ 720 ին Օմարի թոյլտութիւնով բոլոր զերուած իշխանապետները վերադարձան իրենց հայրենիքը, Վահանի համար դժուարութիւններ յարուցուեցան, որպէս զի այդ վայելչադէմ եւ տաղանդաւոր պարսմանին ձեռքէ չեղէ : Սակայն Վահան խնայած էր իր ծագումը. սաստիկ կը փափագէր տեսնել իր հայրենիքը. եւ երբ Սալիֆան կ'ա-

ռարկէր թէ հիմայ անապատ աւերակ դարձած է ան, Վահան խրոխա շեշտով մը սա անմահ խօսքը կը շարտէր անոր երեսէն՝

«Արձակեցէք որ տեսնեմ զորչափութիւնն աւերածոց երկրին խնայ հայրենեաց» : Արկեցէք զիս որ իմ աչքովս տեսնեմ իմ հայրենիքիս աւերը :

Այս վայրկեանին իսկ կը սկսի սքանչելի վկային փառքը. ան իր աչքով պէտք է տեսնէր հայրենիքի աւերը, որպէս զի միանգամ ընդ միշտ համոզուէր թէ հայրենի կրօնքը միայն մնացած էր աղգին աւերածն եւ թէ պէտք էր այդ կրօնքը պաշտպանել ու պահպանել, նոյն իսկ անձի եւ կեանքի կորուստով ու ամէն գինով :

Ահա՛ այս համոզումը հետզհետէ շեշտուած կը տեսնենք Ս. Վահան Գողթնացիի մէջ : Ամիրապետէն հրաման տանելով կուգայ Հայաստան, կը գտնէ փառաւոր ընդունելութիւն եւ կը փեսայանայ Սիւլէյման իշխանին՝ որու նահանգին մէկ գաւառն էր Գողթն : Բայց հաջիւ իր առաջին կրօնքին եւ իշխանութեան հասած, իր բարերարը՝ Օմար Սալիֆայ՝ կը մեռնի. կը յաջորդէ Եզիս՝ որուն օրով կ'աւանդուին Վահանի բրածները : Միւս կողմէ Վահան ինք ալ զգալով եւ լսելով թէ զինքը արքունիք պետի վերադարձեն՝ ինչպէս ինք ալ չմիկնած գիտէր, կը ստիպուի Յունաց մասը փախչելու խորհուրդ մը յղանալ՝ որ իր ժամանակի իշխաններուն համար սովորական բան մըն էր. երբ Յունաց կողմէն նկուէին Արաբներու սահմանը կ'անցնէին, եւ երբ Արաբներէն բռնադատուէին Յոյներու բաժինին մէջ խոյս կուտային : Վահան այս խորհուրդը յայտնեց աներոջը՝ որ իր դատկներով միտոն խափանեց զայն, առարկելով թէ երբ մեկնիս «Դու մեզ ոչ կենդանի լինիս եւ ոչ մեռեալ», այսինքն թէ անորոշութեան մէջ կը թողուս մեզ, մինչդեռ մենք «Օտարութեան մէջ ալ կրնանք գալ հեռք, հոն աղբիլ ու մեռնիլ, կամ քիզի ողբակից բլլալով մշտահոս արցունքներով աստաղիլ. մնայիր հոս ընտանիքիդ հետ եւ զիրար պաշտպանենք» :

Վահան ակամայ ստիպուեցաւ մնալ, մինչեւ որ արքունիքէն յատուկ խնդրակ-

ներ հասան Հայաստան, և անոնց առջև խոյս տալով սխառ ուստանդական ու թափառական կեանքի մը: Նախ գնաց Վրաստան, դարձաւ Այրարատ նահանգ և չըջագայեցաւ բոլոր վանքերը: Ժամանակին Եղիա Կաթողիկոսին յատուկ թուղթով գնաց ուր Գեղամայ երկրէն Մաքենեաց վանքը՝ Վեց ամիս ճգնեցաւ և ապաշխարեց, վասն զի արդէն իր դեղերու մեկը կամովին յանձնած էր իր ձին, սուրբ և իշխանական մատանին այլեւայլ անձերու, իր կեանքը փրկելու համար: Բայց դժբախտ Հայ իշխանապետը զայն ուղի կորցաւ պահել, և մարտիրոսութեան հռահնէ՛լ իր մէջ բորբոքելով՝ 15 տարիներ Հայաստանի վանքերը և անապատ անմարդաբնակ ճգնարանները չըճաղայելէ վերջ գնաց Դուին, և իր ինքնութիւնն ու նախկին հաւատքին վերադարձը յայտնեց Հայաստանի տփն ստեղծուած ոստիկան Մրուանին: Սա արդէն թոյլատու կը գտնուէր միշտ դէպի Քրիստոնեաները: Ուստի չմեռեց Վահանին, որ դիմեց մինչև Դամասկոս Եղիտի յաջորդ Հէշամ Խալիֆային, և իր փառքի օրերուն ընկերակից Դանիելանին (Դարապետին) միջոցով և այդ ատենի դոճապետին Քարչի բերնով իր գողութեամբ իմացուց Ամիրապետին: Խոստում և ողորմութեամբ, բայց առանալիք և խոչանդում չգործեցին Վահանի անդրդուելի հաւատքը թուլացնելու, և սուրբ վկան գլխատուեցաւ Դամասկոսի մօտաւոր Ռուժափ քաղաքին մէջ 738 Մարտ 28 աւագ երկուշաբթի, իններորդ ժամուն, իր 39 տարեկան երիտասարդ հասակին մէջ: Այդ կողմերը Հայեր չգտնուելուն համար մարմինը նախ ամփոփուեցաւ իրեն յատուկ մատուռի մը մէջ, Յոյն և Ասորի եկեղեցականներու կողմէ: Սակայն հօթը տարի վերջ իր խել կենտագիր՝ Արտաւազդ Վարդապետ՝ որ զայն նախապէս ալ ճանչցած էր՝ երբ Վահան Հայաստանի վանքերը կը դեղերէր, Երաշխատորի վանքի մէկ քանի միտրաններով կ'երթայ Ռուժափ և Սուրբին նշխարները կը փոխադրէ իր վանքը:

★

Մեր ազգային սուրբերուն մէջ հայ Ժու-

ղովուրդին նուազ ծանօթ Վահան Գողթնացիի կեանքին զլիաւոր դիժերը ներկայացնելով Տաճարի յարգելի ընթերցողներուն, կը փափագինք կրկին անգամ ինչպէս անոնց, որպէս զի այդ կեանքին յարացոյցը նկատուի սա գաղափարը թէ ունեւորած հայրենիք մը և թշուառ աղքատ մը՝ որպիսին է մերը՝ իր գայութիւնը և յարաւեւութիւնը ապահովուած պիտի գտնէ միշտ կրօնքի և Եկեղեցիի ծոցին մէջ:

Ութերորդ դարու քաղաքական կեանքը վիշտի և դառնութեան չըջան մը եղած է: Արաւքին հալածանքները միանալով ներքին երկպառակութիւններուն, Մամլուհաններու և Բաղրասուներու պայքարին, չափաւանջ ընկճած են Հայութիւնը: Միակ միսթարական երեւոյթը դարձաւ Եկեղեցին է, որ ունեցած է արժանաւոր հովիւներ և վկաներ՝ նման Յովհան Իմաստասէրի Օճնեցուց և Վահան իշխանին Գողթնացուց, որոնց առած է ամենէն զերազանց սխողոսը՝ սուրբի մակդիրը:

Կ'արժէ յիշել նաեւ թէ Վահան Գողթնացիի համար բացառիկ պատիւ մըն է որ իր յատուկ շարականն ալ ունի, յօրինուած հաւանաբար իրեն ժամանակակից քերթուղուհիի մը՝ Սիւնեաց Ստեփանոս եղի Կրթի, Սահակդուխտի կողմէ, թէեւ աւանդութիւնը կը սիրէ մեր շարականին այդ չքնաղ դոճարը վերադրել նոյն ինքն Վահանի քրոջ, որուն անունը անծանօթ մնացած է մեր պատմութեան մէջ:

ԳԱՋՐԻԼ

ՀՈԳԵԼՈՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բ. (*)

Ես իսկ անձամբ՝ լուսահողի Ս. Հայրապետին այս հեղուկեան օրինակը մօտէն տեսած եմ իր անձին վրայ: Ասկէ տառը տարի առաջ՝ ուխտի եւ փրկութեան աշխարհադիտութեանց ձգումով՝ ուղեւորեցայ Երուսաղէմ ահաւոր գիծին վրա-

(*) Շար. և վերջ 3. Գ. Մըրնեան էֆ. Սկիւտարի լաւրանին մէջ բրած ուշագրաւ բանաստեղծութեան:

յէն, անոր 4000 տարուան պատմութեամբն ալ կախալեամ :

Վանքին մեծ դռնէն մտնելու իսկ՝ ողջունուեցայ միտքանութեան մտացի մօտին կողմէն ինծի անտովոր յարգութեամբ մը, զոր բնականաբար չէի սպասեր ինծի անծանօթ անձերէ, եւ զոր թելադրած էր անոնց մեր հեղ չայրապետն հանգուցեալ՝ վաղուց ճանչնալով զիս վշտերովս ՚ի Սկիւտար՝ իբր ինչ եւ է պաշտօնեայ իմաստութեան տաճարին :

Իր մեծագործիկ յարկին մէջ առաջին տեսութեանս հոն իրեն հետ՝ ակներեւ հիւանդ մը դտայ զինքը, բայց նստուկ եւ հազուած հիւանդ մը՝ զինուած ոգիի արեւութեամբ . զի մարդ՝ առաւել հոգիով է որ կ'ապրի : Լուսահոգիին լոյս աշուրները կիսով ուռած ալակերպած էին, մորթին հիւանդութիւնն ալ զայրացած էր, երեսը դռնաս եւ ուռուցիկ : Արայն իր հոգին ողջ քաջող կը թուէր սակայն, հոգիին կրօնազօր՝ որ կը խլրտէր փայլանաձեւ իր խստանոյշ աչքին եւ ձեռքերուն շարժումներուն մէջ : Երբ տխրական դարմանքով հարցուցի որպիսութիւնը .

— Կը տեսնե՞ս վիճակս, արտախօսեց, ահա՛ այդպէս, եւ աքսորի՛ մէջ . . .

Տրտմանալով եւ ան լեզուին մէջ իր . . . ու մեր Սկիւտարէն ակտիի ջուր մը սրակեղու մեքով՝

— Սրբազան, յարեցի, մենք մեր ծնած ու սովորած տեղերն իսկ աքսորի մէջի պէս կ'ապրինք կտր հոն, զուք նորէն՝ վանքի ու ձեր նմաններուն մէջ կ'անաքսորիք :

— Ախ, զոչեց, իցիւ ես ալ ձեզի պէս, այդպէս հոն ըլլայի :

Այսչափ կը սիրէր նա բնաբար, ո՛վ Սկիւտարցիք, իր ծնավայր մայրաքաղաքն ու մանաւանդ իր ուսումնարանն, Սկիւտարը :

Քանի մը օրէն կաղզուրուեցաւ եւ զատու իր կանոնիկ վիճակը, ես ալ՝ իմ մեղքէս՝ կամայ ակամայ վանքին խորհրդամուսն եղայ մասամբ, որ ողբաւ իմաստասիրութեան նպատակէն բոլորովին հեռի էր :

Եօթն ամիս ինկանք եղանք վանական

բաւիղներուն մէջ՝ հօր, եղբօր, բարեկամի, չքարեկամի, միտքանի ու չմիտքանի ալ նման իրեն ու շատերուն հետ՝ աշխատելով կղզեւտեղով ու չարակերելով ներսէն միջին խաղաղութեան մը համար :

Բայց հոս՝ ա՛յ չէր իմ շեշտիկքս : Անյաջողած այդ ներքին խաղաղութեան, երբ կը մեկնէի Վանքէն ու Երուսաղէմէն՝ կորուսած հոգեկան բարձրութեանց մեծ կակ պաշար մը, զնուցի Ս . Հայրապետին մասնաւոր յարկը մեաք բարեաւի . դիմաւորեց զիս ոտքի վրայ, ու այս անգամ աւելի առոյգ եւ առողջ էր՝ կարծես հետս Կ . Պոլիս գալու դիրքով մըն ալ թեթեւցած պատրաստուած :

— Ահա դարձեալ՝ վերջին դիրքս ալ կը տեսնես, ըսաւ, ինչպէս տեսար զիս հոս ամէն դիրքովս, յոր ստիպած է զիս այս յարկին բնակութիւնը . տեսա՞նք ալ . . .

Ու Վանքին ներքիններուն վրայ միմիջեց ինձի լակոնիկ բաներ մը, որոնց համար չէի բոլորովին ի՛մ ալ ազատ փորձերովս ու փորձութիւններովս . ի պատահական իբրեւ վերջին բան՝ յայտնեցի ի՛մ ալ գաղափարս ու տեսութիւնս՝ բաւական տարբեր իրենէն : Իրեն յամառութիւն վերադարձաւ մեր Ս . Հայրապետն հեղ՝ իսկոյն կրկնեց իմ դատաւարանս եւ հաւանութիւն յայտնեց՝ վանքին ներքին կնճռոտ գնացքին վրայ . Նուազ տարբեր բան մը կրեար ըլլալ այդպիսի յարկի մը մեջ : Արդ, եթէ չըլլար նաեւ ինք հեղ՝ չէր հուսնիր իրեն համեմատութեամբ շատ նուաստիս կարծեացը :

Դարձեալ երբ Կ . Պոլիս դարձաւ սղտատիւն՝ համարձակեցայ քանիցս այցել իրեն, ու իրեն պէս օրէնագէտ ու սահմանադրական Սրբազնութեան մը՝ թէ՛ Կ . Պոլիսի հայ Սահմանադրութեան, թէ՛ հունար հայ ազգին լրիւն անդորր զոյուլութեանն ու բարի յառաջդիմութեան վրայ յայտնեցի նորօրինակ խորհեալ գաղափար մը, որուն համամտեցաւ դարձեալ այս երկրորդ անգամ՝ (միայն թէ նախապէս իմանալով հմտագոյն եւ հանրական Արքեպիսկոպոսի մըն ալ համամտութիւնը) :

Արդ՝ եթէ չըլլար ինք նաեւ հեղ՝ ես իր քովն ի՞նչ եւ ո՞վ էի որ ընդունէր եւ հաւանէր այդպիսի մեծ խնդրի մը վրայ իմ դադարիս։ Ի՞նչ էի ես, թէ ոչ՝ զէրոյէն չափ մը վեր՝ թիւ մէկ մը։ Բայց անկեղծ նշանակութիւնը՝ վերերէն շատ վարերն ալ կը նշանակէին հեղերը...

Այսպէս ո՛չ յամառ այլ հեղ՝ հանդերձ սկզբունքով՝ շատ պարագաներու մէջ։

Եւ այսքանը՝ բա՛ւ իր խիստ քրիստոնեայ հեղութեանը վրայ, որ Ս. Լուսաւորիչի հեղ օրէնքն է վասն Հայրապետաց եւ քահանայից (1), ու կը տանի երկրորդ հայրենիքէն ու խաղաղութենէն՝ երկնաւոր հայրենիքն ու խաղաղութիւնը։

* * Իր խորհրդագրածուքիւնն 'ի կրօնս՝ աւելի՛ խոր ու նշանակելի կերպով խիստ (rigide) փոխառապական էր՝ ժամանակակից մեծ մասով հանրախոյզ ու անխորհրդան փոխառապականաց քով։ Կրօնքի մէջ շուրջ խորհրդասիրութիւններէն և գործնական բարեպաշտութիւններէն զատ, որոնց նշանակելիներն էին իր վե՛ստ կուսութիւնը, զուտ հայական օրինասիրութիւնն եւ հոգեւորութիւնները՝ մանաւանդ նուազ ուղ ճշմարտասիրութիւնն եւ պահքը ժողովրդի (2), ունէր անսահման քանակական իմաստութիւն մը ընդդէմ արուեստական անդգամ գիտութեանց։ Իր այս կրօնական խորհրդագրած իմաստութեան սարսուռ-ցուցիչ մէկ օրինակը տեսած եմ տղայութեանս, որ ցորդ եւ միշտ ունենալու է կենտական անմահ կարեւորութիւն մը՝ բոլոր կենտականաց անհատներուն եւ բարեպաշտներուն համար, մանաւանդ եկեղեցւոյ պաշտօնէից՝ եթէ կ'ուզեն հաւատարիմ մնալ ինչ պահող և ստուգածադրած Ս. Հայրապետաց։

(1) Յաճախագատում, Ա.

(2) Իր տկար կազմին հակառակ, մանաւանդ Աղիւստար եղած երկար միջոցին, պահքերն ալ անխորհրդ և բռնէ եղեր, քանիցս յանդիմանելով հասարակաց տեղումնք՝ եկեղեցականներու ու տեղեկ ճաշելու Հայրապետին տկար՝ վատասկեալ մարմինը՝ շատ անգամ ձիթապատուղ հացով իր քաղցը կը քաղցրացունէ եղեր շուկան։ Այսպէս հաւատարիմ պահքի «գրախտային օրինաց», որ բարի սովորութեամբ ու աւանդութեամբ հա-

կեանքի երեկոյի նման ցրտին աշնան երեկոյ մըն էր։ Սկիւտարի Նոր Թաղի եկեղեցիին ճամբէն դէպի Նուհ-Գուլուսի անկիւնաւոր շաւիղէն ննջեցեալ մը կը տեսնէին։ Ս. Հայրապետն ալ՝ յարմար նորոգեցեալ եպիսկոպոս՝ կը հետեւէր յուղարկին. եւ որովհետեւ ինք յուէտ մեծարկի եւ հետեւելի էր մեր ուղայութեանն օրերուն՝ եւ ալ միջոց մը հետեւեցայ յուղարկին, թուի չունեւոր մը՝ որուն անկարկիր ծանօթները թերեւս ծախած էին դիտելով մարմինը Հայտար-Փաշայի հիւանդանոցի պղտիկ դիմնակ սակղեպեանց։ Երբ հասանք Տէլեպային ճանապարհաղլուխը, որուն ձախակողմնան արահետը կը տանէր բուն ճանապարհն՝ երկնայինը, գերեզմանատունը, եւ հակակողմինը Հայտար-Փաշայի կողմը, մեռելակիրները ծածկուցը վար առին դադաղքին վրայէն, ու սկսան անշնորհութեամբ մը դէպի Հայտար-Փաշայ ուղղուիլ պատրաստուիլ։ Մեր Սրբազանը խոժոռ դէմքով՝ երկու քայլ յառաջ խոյսնալով՝ խաչալէն աջն երկնցուցած կիսարաց դադաղքին եւ աջն այդ անշնորհներէն դէպի երկինքը սաստաղից շրջալուծու։

— Եւ ու՞ր. կեցի՞ք, գոչե՞ց, բացէ՞ք։

Եւ գուղձիկ մը կարմիր հող նետեց հէ՛ք զնայեալին դադաղքին մէջ զկծուած։

— Հիմայ տարէ՛ք, թող տեսնեն։

Ու փայլակնօրէն՝ յուղարկաւորներու սիրտի հաճութիւնն ալ պարագիտելով՝

առժ ու պահուած ալ էր հին Հայոց մէջ, եւ որ հիմայ թեթեւ գիտատեսութեամբ մը թողեւած աւրուած է գրեթէ բոլորովին՝ արդի գիտութեան եւ ժամանակիս չգիտեմ ի՞նչ պահանջմանց իբրեւ թէ բոլորովին անհամաձայն ըլլալու զուր ամբաստանութեամբ, մինչ եղբայր եկեղեցի մը՝ մեր քիթին տակ, մեծամասնութեամբ հաւատարիմ՝ պահքի սովորութեան ալ՝ կը խնդայ անշուշտ մեր թեթեւամիտ ոյս յեղ-յեղութեան ալ վրայ։ Հոգեւոյս Հայրապետը՝ Երուսաղէմի վանքին մէջ ինձի հետ բոլորովին մոթող անպան պահքի վրայ ալ խօսած ժամանակ մեծ մասով կը համամարտէ իմ փոտու-բերութեանց, բայց թուի բժշկօրէն թոյլ չէին տար իր հիւանդկալ վիճակին ոյդ 'ի սպառնալիւն անպան պահքը, զոր կրնդունէր իր կրօնքով իր գործարարութեան բերումով եւ իր «ազատ իմաստասիրութեամբ»։

կործեն ըսել կուզէր սխրալուս վսեմութեամբ. «Ե՛ս թողեցի այդ մարմինն և կնքեցի ՚ի Խաչ և ՚ի հող յօրէ՛ն յաւիտեանսկան. թո՛ղ չժպրհին քակել այդ կնիքը զրախող անմիտները, թո՛ղ այդ առ յաւէտ կանգ առած հոգեցոյց ժամացոյցը չփորձեն քակտել՝ իբրեւ թէ նոր մը շինելու կամ անդին նման աւրուած մը շտկելու համար. թո՛ղ յանուն հին իմաստութեան և ազգեցութեանց միատւընին բերեն այդ անզգայացեալները, որ յանուն գիտութեան մըն ալ կ'ոճրադործեն բնութիւնը՝ կտրատելով յաճախ, թէ իրենց վախճանն ալ այս հողով պիտի կնքուի ընդ հուս. մարմնոյ փակ մարտնչին հողին՝ հերիք խորեցի՛ն այդ մատոյցը և մսակերք. ան կնքեալ է մեծ ստեղծութիւն գաղանկացն հետ, ու կնքեալ պիտի մնայ յաւէտ՝ չա՛ն՛ւ, զո՛ւր գիտութեան, համբաւ՝ ու անասաւանձ անհատաստութեան և նմաններու համար. մի՛ խաղաք ո՛չ բնութեան հետ, մի՛ անոր Տիրոջը դործերուն և խորհրդոց հետ, մի՛ սնիրաւէք բո՛ւն գիտութեան ալ՝ որ կ'աստուածապաշտէ հողն հողի՛ն, հողին Հոգւոյն, մարմինն ՚ի նո՛յն, բանալը մեղք և ա՛ռ յաւիտեան»։ Այո՛, և Սրբազանն ալ իր հողին վրայ էր հոն. Եկեղեցին արեւելեան հին իմաստութեան հետ՝ այգպէս կ'ըսէ ու կը հաստատէ։ Այդ օրէն շատ առաջ՝ վիշտով հոգեզգած եղած էի ես ալ այդ ընդդէմ բնութեան և Արարչին չա՛ր դործունէութեանց, որ՝ աւա՛ղ յանուն գիտութեան ալ չարիք մը աւելի կը տեւեցունեն զեւ արեգակին տակ, կարծես Իպոկրատէն ցայսօր տեղի ունեցած բնուէր զուր փորձերը և փորձանքները չբաւեցին։

Ես այն օրն ալ՝ Յէսսեան ուրախութեամբ մը տիրաղօծ՝ շատ խորհրդաւոր և խորհրդաղգած նկատեցի Սրբազան Հայրապետին կրօնատառ շեշտերն ու երկնահայեաց փայլակուծը, որ կը ներկայացուէր քրիստոնէայ Եկեղեցիին հին իմաստութիւնն ալ՝ զրահեալ ու անդգամ գիտուն ըստեմաներու մը հանդէպ, որ այսօրան տարի է՝ կարծես իրենց շինած ժամացոյցն ըլլար՝ կը ցիւլեն, կը մամառուն,

կը խուզեն, կը դատարարեն և այլն՝ այդ հոգեցոյց տաճար մարմինն հրաշաստեղծ՝ բան մը գիտնալու համար իրենց չվերաբերածէն, որով միշտ պակասութիւն մը կը մնայ այդ կարգի անպաշտօղ գիտութեանց մէջ, ու այդ պակասն է որ կը բարդի ու կը բարդի յանչափա, ազխտութեան մը տոնելու յանգեցունելու աստիճան այդ գիտութիւնը, ՚ի թշնամանս բուն հոգետես ըստի՝ գիտութեան բարի՝ Արարչին՝ պատճառելով ցաւեր, վիշտեր, ատելութիւն. ներ, սխեր, վրէժներ, յիմարութիւններ ու համաճարակներ, զլսաւորապէս մեծ քաղաքակրթութեանց ու մսակերներու մը մէջ, մինչև որ մեծ ուղորմութեան ու մեծ Գիտութեան շնորհը դայ հեղուլ՝ ատոյգ և երկիւղած գիտուններուն ի շնորհս՝ տուր ճառագայթ մըն ալ իմաստութեան, ֆրանքլինեան երկտրիկներու հանգոյն, որ յայտնի ցոյց տայ երկինքէն այդ զրախողիքներուն մեծ սխալները գիտունական չգիտեմ ինչպէս կան։ Այլ մինչև այդ օրն ինչե՛ր քաղեցին զնստորեալ տաղնապեալ հոգետեսք, միջ Հոգիւր հայրապետական, կարգ մը յամու գիտուններու երեսէն, որ բայի իրենցմէ՝ և իրենց գիտութենէն ոչինչի կը հաւատան և կ'երթան այդ ոչինչին ետեւէն, գտնելու համար ոչինչը։ «Չոքան զհետ ոչինչի, և գտին զոչինչ» (1)։ Արդէն՝ այդ ոչնչաւ հաւատ գիտութեան ալ աւերներուն դէմ՝ Ֆրանսայի նման սղատ երկրի մը մայրաքաղաքին օրաղիւրները քանի մը տարի առաջ որոտալից բողոքեցին՝ հիւանդանոցներու մէջ եղած յիմար փորձերուն և անզգամ ւսանող փորձալուծութեանց դէմ, իբրեւ սպանդանոց ամբաստանելով հիւանդանոցներն, որպէս մենք եւս ականատեսն ու անձնակիր ալ եղած ենք հին օրերուն՝ մեր ու մերոնց մեղքէն...

Մարդկութեան՝ մանաւանդ գիտատառութեամբ ալ տառապեալ մեր ազգին համար՝ եթէ սուգի մը չափ կարեւորութիւն չունենար այս ինդիլը՝ ես միշտ սգահանդէսի մը մէջ պատճառ չէի տաներ անոր վրայ խօսելու աւաղ պէտքով մը, մանաւանդ վեհափառ Լուսահոգիին խորհրդաղգած կրօնն սլ առիթ առնելով, որպէս զի այս

(1) Նոյնի

կողմէն ալ սրբագրենք մեր հին բեմիմը՝ ինչպէս սովորեցանք բռնել (1) :

Հայաստանիայց Եկեղեցին ու հին Հայոց ազգն ալ՝ արդէն իբրեւ բնատէր ու Աստուածապաշտ ժողովուրդ՝ չէ՛ր ընդունած այդ սուտ գիտութեանց նման հեթեթանքն՝ իր նուիրական կանոններովն և օրէնքով : Գլխաւորապէս Եկեղեցւոյ պաշտօնէից մեծ պարտքն է հակել՝ այս անցաւոր հաւատօսին մէջ՝ որպէս զի թեթեւութեամբ կէս դէս գիտութեամբ աւելի՛ չհամառօտեն պակասեալ կեանքերն ու չթմանան զգոյշութենէրը՝ որ թելերն են Աստուածային աշխարհը քնարին : Օրհնութեամբ ըլլայ մեր խորհրդազգած հայրապետին յիշատակն ալ՝ որ առիթ կ'ըլլայ առաջին անգամ ըլլալով այս մեր խորհրդազած հրապարակային դիտողութեանց :

* * Իսկ իր հոգեհետական տրտաւորքը՝ մեծագոյնն էր իր խորհուրդներուն, որ իր վախճանովն, այսքան տրտաւոր անակնկալ վախճանովն յայտնուեցան :

Ներքեցէ՛ք, ո՛վ Սկիւտարցի եղբարք ի՛մ, ա՛յ տկարութեանս և յոգնած չփութութեանս, որ այդ տրտաւորքին պատմութեամբ վերջացունեմ բացումս այս տխուր խօսքերս, որոնք միշտ սիրտի՛ ու խմտութեան սիրոյ խանդով կ'ուզուին Ձեզի, որ կը սիրէք Հոգեւոյս Սրբազանին նման ինծի նման՝ մեր խմտութեան և անդորրիկ Սկիւտարը :

Գրուեցաւ ու պատմուեցաւ՝ թէ Վոսփորի տիւրէն նորինտիր մեր Կաթողիկոսին հաւր մեկնած պահուն էր՝ որ ինք՝ Վեհափառն՝ աչքն այս մեր բնադիրք քաղաքին հորիզոններուն և սքանչելի բլուրներուն յաւած յորդապէս արտասուէ՛ր է՝ թերեւս վախճանին ալ նախազգածութեամբ : Իր

ուզելից Գեր . Պալաքեան վարդապետն ալ այժմ կը վկայէ թէ շա՛տ լացեր է ողբացեալ Հայրապետը մեկնած պահուն, սիրտի՛ բաժանում մը մեր հողերէն, մեր սիրտերէն ջերմ սիրոյ ջերմ կաթուններ՝ մանաւանդ մեր սիրուն Սկիւտարին հանդէպ : Եւ ահա այդ վեհ տրտաւորքը տաան և վեց ամիս ետքն իր մեկնութիւնը կուտայ՝ իր վախճանին վրայ մեր գերարտօսերով պատուականելու իր սուրբ արտասուեցը : Այդ արտասուելի վախճանին պարագաները տխուր կը նկարագրուին՝ քանի մը անձնաւորութեանց ընծայելով անգիտելի պատախաճառութիւն մը, ո՛վ գիտէ : Սրբազան Հայրապետին արդէն տառապեալ, հիւանդ-կախ մարմինը՝ չտոկաց թերեւս շատ պանդխտական անհարթութեանց, թերեւս այն անհարկութեանց ալ, որոնց ամէն տեղ ու ամէն ատեն նշուած ըլլալ անօրինուած է առաքինեաց ու առաքինութեանց : Գիրն ինք բարձրաբարձու կը վկայէ Մեծն Պողոսի փողով՝ թէ « Աշխարհ ի չարի՛ կայ » : Չարի վրայ մեծ մասով հոտաւորուած աշխարհի մը մէջ՝ ի հարկէ պիտի չարչարուէր հէք Հայրապետնիս ալ՝ ըլլա՛յ տգիտութեան, ըլլա՛յ անզգամ գիտութեան, ըլլա՛յ փառասիրութեան, ըլլա՛յ անօրէնութեան և այլն երեւէն : Ասոնցմէ ո՛րն ալ ըլլայ իր վախճանին վերջին պատճառներէն մին՝ ես պիտի աղաչէի որ ազգին այս չփութ ու խռով վիճակին ու ՏԻԵՁԵՐԱԿԱՆ, ԽՍՂԱԳՈՒԹԵԱՆ հուրիւրեալ այս քաներորդ դարուն սկիզբները՝ նոր չփութ և խռով մը չպատճառէինք ազգին անդամոց մէջ, տխրաւոր ինք մահուան պարագաներն ու տախիբները քրքրելով շատ հեռուէն : Թող հողիներն իրարու փախուսան անդիէն աս-դիէն իրարու թերութիւններն ու մեղքը : Հոգիներու աշխարհին մէջ հաստատուած է՝ խորհրդական հոգեկանութեամբ՝ յարաբերութիւն մը՝ անմահ՝ որ վախճանելոյ միջոցով կը կրթէ, կը դատաւարակէ ու կը պատմէ ի բարին զմիտ կենդանիներս : Թող ինք՝ Հայրապետին հողին՝ կրթէ՛ ու պատմէ իր յաւիտենական միմուռներով կենդանի յանդուարները, ինչպէս մեծ խմտութեան Գիրքն ալ կը խորհրդածէ խորին յանդի-

(1) Եւանդը շատ խելքը քիչ տակդեպեան մը այս սղահանդէսի բացումի ճառն աւարտելէն ետք՝ մտեանալով խօսողին՝ ըսած է ականջէն թէ « Բեզի ալ մեռնելէդ ետք պիտի դիպնենք, հասկնալու համար թէ առանց միս ուտելու ինչպէ՛ս մարեցար » : Խեղացին չէր խորհեր թէ ինչպէ՛ս ինք միս ուտելով հանդերձ կ'ապրի, եւ մենք բուսականացք երբեք չենք խորհիր այդպէս իր վրայ : « Հո՛ս է խնդիրն խնդրոց » :

մանութեամբ մը : « Դատաւարտէ արդար հանգուցեալ զանադարս կենդանին » :

Հոգեւոյս Հայրապետն՝ անձնանուէր լիութեամբ և մարդկային վիճակին ներսձարդարութեամբ իր պաշտօնն ու ասպարէզը կատարած՝ Մեծ Կամբքին բարի քննութեամբն հանգեաւ մեկիկ խաղաղութեամբ՝ կտակելով իր Սուրբ Եկեղեցիին ու ազգին ԽԱՂԱՂ ԶԱՐԳԱՑՈՒՄԻ բորձը, պաշտելի նշանաբանը : Հետևելնք այս նշանաբանին, ներենք իրարու յանցանքն և սրբադրենք մեր յանցանքը խաղաղութեամբ : ու այս տիրական խաղաղութեամբ, որ մեր այս երկրին ու ընդհանուր Եւրոպայի նշանաբանն եղած է տոանակ մը տարիներէ ի վեր, անմահացունքն հոս իր սուրբ յիշատակը :

Իր Սրբութիւնն՝ ի չարի հաստատեալ այս աշխարհի վրայ՝ չունեցաւ արդարեւ խաղաղ հայրենիք ու հանգիստ մը, զորս գրեթէ զո՛ւր ջանաց պատրաստել իր սիրելի ազգին : այս ջանքերն իսկ, մեծագոյն ցոյց մըն են իրենց գերեւելովն անգամ՝ մեծագոյն անդրադոյն հանգիստի ու հայրենիքի մը անմահական :

Ա՛հ, պանդխտութիւն և չարչարանք հոգիի այս անցաւոր մարմին տաճարին մէջ, պանդխտութիւն՝ բնավայրէ ու ծնողքէ հեռու, պանդխտութիւն և կոխ և այսր անդր պաշտօններու բերմամբ, պանդխտութիւն և երկար քաղաք յերուսաղէմ, պանդխտութիւն վերջապէս ի մեծ ուխտն յԱյրարատ : ահա այս եօթնպատիկ պանդխտութիւնք և չարչարանք մեր մեծ Հայրապետին՝ ցոյց պատճառ եւ նշաններ են շօշափելի իմն մնացելոցս համար՝ թէ իր մեծ նժդեհ հոգին արդ թռած ու թառած է իր մեծ բա՛ն հայրենիքին ու ազգին մէջ՝ երկինքի անմահութեան կայանն երանական Սուրբերու ազգակից՝ ի հանգիստ յաւիտեանական հայրենեացն :


ՅԻՇԱՏԱԿ ԼՈՐԱ ՕՐՀԵՈՒԹԵԱՄԲ :

Յ. Դ. ՄՐՄԸՐԵԱՆ

Ահեւաբ Կ. Պոլիսի

ՀԱՅԱՍՏԻ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԻՍԻՕՆԱՐԻՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Հայու զգացումներով որովորդ սրտի տէր վեհոգի ամերիկացիին՝ Մր. Հ. Մ. Սլէյի — որուն մահը գուժեցինք անցեալ թուով — յուզարկաւորութիւնը պատկանելի պարզութեամբ մը կատարուեցաւ Բերայի Հայ-բողոքականաց Ս. Երրորդութիւն Եկեղեցին : Ս. Գրքի Անգլ. ընթերցումներու, աղօթքներու, ուղերձներու և երգերու հետ խառն, երգուեցաւ հայերէն հոգեւոր երգ մը, եւ նոյն եկեղեցւոյն հովիւ Վեր. Ա. Շմաւոնեան սրտառուչ դամբանականով մը յուզեց մեր սիրտերը : Պատմեց իր բարեկամութիւնը անոր հետ, մանկութենէ ի վեր սկսեալ ինքեւոր ինքնաշարժութեամբ, « Հայաստանի ձիւնապատ լեռներուն ստորոտը » : Ըսաւ թէ ան օտար երկրի (Ամերիկա) մէջ, Հայոց համար, եւ Հայոց մէջ կ'աշխատէր այն միեւնոյն համակրանքով եւ սիրով որ յատկանիշը եղան իր կեանքին : « Գորովալից սիրով, բարոյական անսկզուն կորովով ինքզինքը նուիրեց Հայ ազգին հոգեւոր ու բարոյական բարձրացման գործին որուն անկեղծ հաւատացող մըն էր : Իրեն նպատակ ընտրեց ո՛չ թէ զանիւ թերութիւններ եւ ուղղիւ ջանալ զանոնք քննադատելով, այլ զանիւ եւ գոհատել լուազայնը, ի վեր հանել ինչ որ ազնիւ էր եւ կարող աղնուանալու, իր իսկ խօսքերովը՝ « Թագուն կարկիւթիւնները ազգին ոգիին », եւ զանոնք ի սպաս դնել բազմաշարժար Հայութեան » : Վեր. Շմաւոնեան իր զգայուն բանախօսութեամբ՝ շատ ճշգրտօրէն պատկերացուց հանգուցեալին նկարագիրը, եւ խորին շնորհապարտութեան հառաչ մը թռաւ մեր կուրծքէն, երբ պատմեց հանգուցեալին կեանքին հետեւեալ հուսկ դրուագը. — Վերջին վայրկեաններուն, երբ իր շուրջը հաւաքուող սրտի հատորներուն այլեւս ըսելիք չունէր, հայերէն լեզուով այս յայտարարութիւնը կ'ընէ. — « Ասուծոյ սիրոյն եւ ազգիս սիրոյն համար ինչ որ կրնայի՝ րի. արդարութեան եւ ճշմար-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՆԻՒ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

ՄՐ. ՇԷՐՄԱՆՈՒ Մ. ԱԼԷՆ (1865-1911)

սուրբան համար պատերազմեցայ, խիղճս
հանդարտ է» . և Կ'աղօթէ Հայ ազգին և
Հայաստանեայց Եկեղեցւոյ լուսաւորու-
թեանը և պայծառութեանը համար : Շատ
իրաւունքով վերջացուց Վեր . Շմաւոն-
եան իր խօսքերը .— «Գնա՛ հանդարտ
խիղճով և յաղթական, իմ սիրելի՛ եղ-
բայրս, Արդարութեան և Ժշմարութեան
Իշխանին որուն հաւատարիմ զինուոր ե-
ղար : Աստուած գիտէ որ իր սիրոյն համար
ըրբ ինչ որ կրնայիր, և իմ աղգս ալ զօր
քու ազգի Կոչեցիր, և զօր քեզմէ կը
սորվինք աւելի՛ մեծ սիրով սիրել, սիրի

զխմայ երախտագէտ սիրտով յիշիլ այն որ
այնքան սիրեց զայն կեանքով ու մահով» :
Ի Վերջոյ Պատր . Փոխանորդ Տ . Ղեւոնդ Մ .
Վ . Դուրեան յատուկ հրաւերով բեմ ելաւ
և ջերմ ու արտազին գնահատութիւնը
ըրաւ Մր . Հ . Մ . Ալէնի հայ ժողովուրդին
համար ըրած անձնադոհութեանց . խօսեցաւ
Հայ սրբերու և այրիներու ըրած օգնու-
թիւններուն վրայ, և աւելցուց թէ Հայ
և բողոքական համայնքներուն միջև ուրտ
մերձեցում մը յառաջ բերելու համար ոչ
ոք կրցաւ լաւագոյն գործ մը տեսնել որ-
քան ողբացեալ Մր . Ալէն : Նորին Գերա-

պատուութիւնը վերջացուց՝ բռնելով թէ՛ Հայ ազգը իր տարեգրութիւններուն մէջ ոսկեատու պիտի գրէ անոր անմոռանալի անուանը։ Ծաղկեպտակներուն մէջ կ'երեւանային Կիլիկիոյ կեդրոնական որսախնամ յանձնաժողովին, Սկիւտարի յառաջդիմական միութեան, և «Վշտակիր Վատպուրական» ցիներուն» կողմէ զրկուածները։

* * Աւետաբերի վերջին թիւին մէջ՝ որ մեծ մասամբ նուիրուած է հանգուցեալին յիշատակին՝ Տիար Հ. Մամիկոնեան որ ամէն շաբթու նոյն թերթին մէջ կը գրէ «Հայ կեանք»ին վրայ ուշադրու յօդուածներ, սա շահեկան տողերը ունի. —

«Մր. Ալէն շատ կը սիրէր Հայ Եկեղեցին, որովհետեւ անոր կենտրոնակութեան և բարեփոխման անկեղծ հաւատացող մին էր։ Իրաւունք ալ ունէր. որովհետեւ հին եկեղեցիներէն և ոչ մէկը Հայ Եկեղեցւոյ ուսմկաւորական-ժողովրդական ուղին և դաւանական պարզութիւնը ունի։ Ինչպէս «Քրիստիսիս Վեթի» (Քրիստոնէական Աշխարհ) Գերման բողոքական համալուսար հոգեւորականներէ և անուանի փրօֆէսորներէ կազմուած Հայաստէր մեծ կուսակցութիւնը կ'ուզէ Հայ Եկեղեցիին ներքին բարեփոխութեան նպատակը՝ առանց զայն իր ազգային նկարագրէն զրկելու, և զայն արդէ բողոքական Եկեղեցւոյ դիտական ու դործնական բարձրութեան ու կենտրոնակութեան հասցնել, այնպէս ալ Մր. Ալէն կ'սիրէր Հայ Եկեղեցին և կ'ուզէր զայն ի. դարու բարձրութեան վրայ աւանդել, առանց անոր ազգային նկարագիրը խախտելու, և այս ձեւով կը կարծէր Հայաստան բողոք հաստատմանուն ամենէն աւելի օգտակար ըլլալ։ Այս նպատակով ալ ան կ'ուզէր Հայ Եկեղեցին մօտէն ծանօթացնել իր հայրենակիցներուն՝ անգլիներէն հատորով մը, որուն մէջ Հայ Եկեղեցւոյ ուղին կ'ուզէր պարզել և հերքել այն կարգ մը կենթադրութիւններն ու նախապաշարմաները, որոնք հին ատեններէ ի վեր տարածուած էին Քրիստոնէական հնազանդ պատահան այս Եկեղեցւոյ մասին։ Այս նպատակին իրողործման համար հանգուցեալը ծրարած էր նոյն իսկ Ամերիկա երթալ, և դատա-

խօսութիւններու շարքով մը Հայը և անոր Եկեղեցին մօտէն ծանօթացնել իր ազնիւ հայրենակիցներուն, ինչպէս նման ջանքեր և զան Գերմանիա։»

* * Ուրախութեամբ կ'իմանանք թէ մասնագրութիւն կայ մասնաւոր հատորի մը մէջ ամփոփել ողբացեալ հայաստէր միաբնակիւ լաւագոյն քարոզները, յօդուածները, և բանաստեղծութիւնները, որոնց մէջ իր մասնաւոր աւելը պիտի ունենայ Սկիւտարի մէջ վերջին անգամ ըրած բանաստեղծութիւնը՝ Վատպուրականի վրայ, մողական լապտերներով ցուցադրելով հետաքրքրաշարժ տեսարաններ Հայ կեանքէն, որոնք հատորին մէջ ալ պիտի երեւան գեղեցիկ պատկերներով։

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՄԵՐՈՒԺ-ԱՆ ՊԱՐՄԱՄԵԱՆ. — «Հսկումը», Տում մեկ արարուածով. Եւրք Պրանսուա Գոբէի. — Տպ. Շանք, Կ. Պոլիս 1910:

Գոբէի զրականութիւնը եթէ ոչ Ռուսահայոց՝ բայց մեզի Թուրքահայոց շատ ծանօթ է մեր քնքաշ բանաստեղծներէն շատ սիրուած։ Սակայն զժողովարար մինչև այսօր Պրանսուա Գոբէին միայն պատահիկներ թարգմանուած են. ընդհակառակն կարելի էր ճօխ հասոր մը հրատարակել անոր բանաստեղծութեանց թարգմանութեան։ Իսկ թերթին «Բիւզանդիոն» լրագրի մէջ թարգմանուած է հեղինակին Յանգաւորը. ունինք իր գործերէն Թագի համարը, Հանքիէդը, Ռուսահայերէն թարգմանուած. իսկ Դարբիններու գործադուր երկու անգամ թարգմանուած, և սրտաշարժ Հսկումը երեք անգամ։ Այդ վերջինը արւստի ձեւով հիմայ բանաստեղծ Պարսամեան Մերութանն է որ հրապարակ կը հանէ։

Ինչերուն միայն անծանօթ է Հսկումը. հայրենասիրութեան ու ներդաժմութեան յիշատակն ողբերգութիւնը բնի կը հանէ Պ. Մերութան Պարսամեան։ Եւ հանգիստանալ անգամ մը եւս պիտի համազուի որ

աշխարհակալները համաշխարհային սպանութիւններով դիւցսողնացած են: Անոյշ համոզում մըն ալ կայ. Գորէ թէեւ մեծ հայրենատէր մըն է, բայց այդ իրեն պատճառէ տալի ընել վիրաւորուած գերմանացի մարտիկ մը. «Ի՞նչ կեցեր կը նայիք ան. տարբեր... Գերմանացի է, անո՞ր համար: Վերաւոր մըն է, պէ՛տք է դարմանիլ զոհն: Չէ՛ք տեսներ որ կը չարչարուի»: Թշուառին օգնելու է ուրեմն, թէեւ այն քու սիրելիդ, քու հարազատդ խողխողած է: Աւետարանական սկզբունք է Գորէի քարոզածը, և կարծեա տոտր համար է որ Գորէի գրականութեան և հոգեբանութեան մէջ Աւետարանի պարզութիւնը ու քաղցրութիւնը կը նշմարուի, ինչ որ մեզմէ առաջ նոյնը տեսած են իր ցեղի քննադատները:

Կին արտաքին ինչ որ դարաւոր գրականութիւնը ցոյց է տուած, կարող չէ իր յուզումներու պոթկումը էն լսնկած պահուն զսպել. տոտր հակառակը կը տեսնենք Գորէի հերոսուհի Իռէնին վրայ: Սա կը լսէ որ իր դարմանած սպան այն է, որ սպաննած է իր սրտին արեւ. նշանածը, և անտարբերութիւն կը կեղծէ. չէ՛, չէ՛, փութորիկը անոյշ հովով կտրելի չէ մարիլ... Իռէն կրնար փութորիկ մը դառնալ և վերջը ներդաժանութեան խաղաղ հոգին ցոյց տալ. ընդհակառակն Գորէ այդպէս չէ ըրած. և դուցէ՛ այդ սառնասրտութեան մէջ խոշոր հերոսութիւն կարգացուի. բայց բնական օրէնքի հակառակ է. ընականէն դուրս եղած բան մը կարելի չէ դրուատել իբրեւ սքանչելի պարզութիւն:

Փրանտան պարտուած, խորտակուած է Գերմանացիէն. սակայն հայրենատէր Փրանտայի քերթողը նոյնիսկ այդ պարտութեան մէջ հերոսութիւն կը գտնէ:

Ո՛ւր է այդ հերոսութիւնը:

Աննշմարելի կէս մը չէ այդ. վստ Գերմանացին կռնակէն կը միտէ տուր, իսկ Փրանտային կուրծքէն...

Գորէ հայրենատէր է, և իր դարը իր հայրենիքին թշուառ վիճակը այդ կը պահանջէ:

Պ. Պարտամեան քնքուշ ծառայութիւն

մը կ'ընէ Գորէի այդ լանտատեղձական փոքր դիւցսողնակութիւնը բնի վրայ հանելով. հանգիստտես լազմութեան քարոզած կ'ըլլայ ներդաժանութեան գերբնական հոգի, և միեւնոյն ատեն հայրենատիրութիւնը կ'արծարծէ:

Պ. Պարտամեան առամին մէջ պահած է հեղինակին նիւթին պարզութիւնը, և որդէն այդ պարծին է՛ն հմայքոտ նշանակութիւնը իր պարզութեան մէջն է:

ԱՏՐՈՒՇԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՆԵՐՇՆԶԱԾ ՅՈՅՍԵՐԸ

Լուազոյն տրամադրութիւններով և յայտերով կը փակուի տարւոյն առաջին ամիսը: Ազգ. Ժողովին Կեդրոնի և Զախտկողմի խմբակցութիւններուն միջեւ համաձայնութիւնը կը քուտնէ, որուն որոշման պատճառով վերջին (Յունի. 21) նիստին մէջ. — որու ներկայ գտնուեցան երկու խմբակցութիւններու անդամք՝ տոտար միծամանութեամբ, — ընդունուեցաւ Ս. Պատրիարք Հոր հրաժարականը, Զախտկողման երեսփոխաններու կողմէ ցույցանուելով հանդերձ: Ընդունուեցան նաեւ նորընտիր Կրօն. և Քաղ. Ժողովներու անդամաց անհատաբար տուած հրաժարականները, և հրաժարեալ Սեղբոսեան Վարչութիւնը հրաւիրուեցաւ շարունակելու պաշտօնը՝ Պատր. Տեղապահն ընտրելու և երեսփոխաններու մէկ հինգերորդին վիճակաւ դադարման ձեռնարկելու համար: Որոշուեցաւ նաեւ որ Ազգ. Ժողովը նիստ չգումարէ մինչեւ երկու տմիս, այն է մինչեւ որ վիճակով դադարելի երեսփոխանաց յաջորդներու ընտրութիւնը կատարուի: Ազգ. երկամսեայ չըջանին եթէ հարկ ծաղի Տեղապահն և Վարչութիւնը պիտի կրնան Ժողովի հրաւիրել երեսփոխանները:

Ազգ. Ժողովին նոյն նիստին մէջ խոր-

հրդակցութիւններ կատարուեցան Ատա-
նայէ հասած վրդովիչ յօւրերուն վրայ :
Պատր . փոխանորդ Տ . Ղեւնդ . Մ . Վ .
Դուրեան պատմեց ներքին դործաց Վսեմ ,
Նախարարին մօտ ըրած գիմունն և յիշա-
տակագիր մը մատուցած ըլլալը՝ վրդովիչ
կացութեան վազրնդփոյթ դարման մը
տարուելու անհրաժեշտութեան մասին : Նա-
խարարը պատասխանած է թէ ինք ալ
լրած է արտաճայութիւնները (կազանդի
գիշերը անժամանակ եզան կարգացուելը ,
կիթման գիշերը կարգ մը Հայոց տուններու
վրայ կնչի կարմիր նշաններ գծուելը , և ին .) ,
ուստի հեռադրած ևս պատասխան ըս-
տացած է թէ յուզում արդարեւ տեղի
ունեցած է , բայց պատասխանատուները
պատժուած են , և այժմ հետեւ ոչինչ
տեղի ունեցած է : Սակայն դարձեալ պիտի
հեռագրէ և խիստ հրահանգներ պիտի տայ
անդ սրբութեան պահպանման համար : Կար-
ծիքներու փոխանակութեան միջոցին գո-
հունակութիւն յայտնուեցաւ փոխանորդ
Տ . Ղեւնդ . Մ . Վ . փ . ազգին անխիղճութեան
վիճակին մէջ պէտք եղած գիմուն-
ներն ընկ գիւթալուն , և աղէտի մը ա-
ռաջքն առնել աշխատելուն համար : Մի-
ևնոյն տանն տմէն սք համամիտ գտնուե-
ցաւ , ուժ տալու համար Վարչութեան
յարաքերական գործերու համար կառավա-
րութեան մօտ քննելիք գիմուններուն հա-
մար : Այս առթիւ ջերմ շնորհակալութեամբ
պէտք է յիշտի Ատանայի կուսակալ Վսեմ .
Ճէմալ պէյի ընթացքը , որով յանցաւոր-
ներու պատժուելուն հոգ տարած , ևս մա-
մաւնեց ազգու յայտարարութեամբ մը
ժողովուրդն զգուշացուցած է ոճբողարտ
արարքներու դէմ :

* * * Վարչութեան նիստեր .— Ազգային
Ժողովի որոշման համաձայն , Վարչութիւնը
անցեալ Բշ . Էն (Յնդք . 24) սկսաւ իր նիս-
տակը : Ատալին գործն բրաւ երեսփոխանաց
մէկ հինգերորդի լուծման ինդիրը , և Ե-
րեսի , յատաճիկայ ընտրութեանց քուէար-
կութեան հսկելու համար ալ յանձնաժողով
մը կազմեց Պարգե Փափուղեան Մարգոս
Նաթանեան , Ներսէս Օհանեան , Ստեփան
Թէլեան , Հմայեակ Խոսրովեան , Ազեք-

անդր Փանոսեան , Միհրդատ Հայրապետ , և
Հմայեակ Լաճիկեան էֆէնտիներէ : Յետոյ
ինկատ առաւ փոխանորդ Տ . Ղեւնդ . Մ .
Վ . փ . տեղեկագիրը , որով կը ներկայացնէր
Ս . Պատրիարք Հօր հրաժարելէն ի վեր իր
ունեցած յարաքերական և ներքին գործառ-
նութիւնները : Այս տեղեկագիրին մէջ յիշ-
ուած էին ի մէջ այլոց՝ Մշոյ , Մանազկեր-
տի և Վանայ մէջ կառավարական պաշտօն-
եաներու բանած հակասամանադրական
ընթացքը և Պատրիարքարանէ եղած բու-
ղոքները , կուսակալութեանց նոր օրէնքին
և գաւառական իսքիյաւ մեքիսիներու
կազմակերպութեան մասին եղած բազմա-
րը , Ատանայի սրբերուն և ալիքներուն յառ-
կացուած 10000 ոսկիին-որուն՝ պիւտժէէն
ջնջուած ըլլալը ծանուցուեցաւ-հետապնդ-
ման պարագան , Յունաց Պատրիարքարանի
հետ եղած համարաշխական ձեռնարկները ,
և այլն : Ժողովը որոշեց յատաճիկայ նիստի
մը հրաւիրել Օսմ . Խորհրդարանի Հայ ան-
դամները , խորհրդակցելու համար .— 1 . Ա-
տանայի վիճակին ապահովութեան , 2 . Վե-
րայիշեալ 10000 ոսկիին վերստին պիտական
պիւտժէէն մէջ անցուելուն , և 3 . Հողային
գրտամանց և հարստահարութեանց մասին :
Ժողովը այդ նիստին մէջ զբաղեցաւ յարա-
քերական և ներքին ուրիշ կարեւոր խն-
դիրներու վրայ :

Բաղ . Ժողովը Դշ . ևս (Յնդ . 27) դու-
մարուելով շարունակեց իր կարգադրու-
թիւնները օրուան կարեւոր խնդրոց վրայ :

* * * Խառն Ժողովոյ որոշման համաձայն՝
Տ . Մաղաքիա Եպ . Տէրունեանէ , և Տօքթ .
Տաղաւարեան և Ա . Հալաճեան էֆէնտիներէ
բաղկացած պատգամաւորութիւն մը անց-
եալ Դշ . օրը Բ . Դուսը երթալով ի գիմաց
ազգին Դատական Նախարար Նէճմիտին
Պէյի ցաւ յայտնեց Բ . Դրան հրկիզման սու-
թիւ , և մաղթեց որ վերջինն ըլլայ : Ս .
Պատրիարքին հրաժարականին առթիւ ալ
կարծիքի փոխանակութիւններէ ետքը վերջ
դառաւ տեսակցութիւնը , որ շատ սիրալիր
եղաւ :

* * * Ս . Պատրիարք Հօր հրաժարականը ,
որ Ազգ . Ժողովոյ երկու կուսակցութեանց
համերաշխութեան լուրին վրայ Նախարա-

բարաց Խորհրդոյ կողմէ ընդունուած և վիճ. Կայսեր ներկայացուած էր վաւերացուելու համար, ընդունուած է Ն. Կ. Վե. համառութեան կողմէն ալ, և Բ. Կրան հաղորդուած է: Վարչապետը՝ հրաման ուղղած ըլլալով Դատական հաստատարին օրովէօյի հարկ եղած տեղեկութիւններն հաղորդելին Պատրիարքարան, կը յաւանդուի որ Ապղ. Վարչութիւնն այս շարժաւ կատարէ Պատր. Տեղապահի ընտրութիւնը:

* * * Վերջին պահուն կ'իմանանք թէ Խաւն ժողովը Պատր. Տեղապահ ընտրած է Տ. Վահրամ Ս. Արքեպ. Մանկունի:

ՀԱՅԱՅ ՆՈՒՐԱՍՏՈՒՈՒԹԵԱՆ մը լուրը հաղորդեց նախորդ շաբթուան Թիֆլիզէն Մեակի խորհրդի Պ. Համարածու Սաաքեւան: Վերջերս մնաւ է Օր. Թամարու Ղուկասեան որու հայրը՝ Աւետիս Թամարեան մէկ ու կէս միլիոն ռուբլի կտակած է Թրքահայոց մէջ կրթական բարձրագոյն հաստատութիւն մը հիմնելու համար: Այս ուրախութիւն լուրը հաստատուած վերջէն հասած տեղեկութիւններով եւս:

ԵԳԻՊՏՈՍԻ Հ. Բ. ՄԻՈՒԹԻԻՆԸ հարաւիթ մը ընծայած է ընդհ. Հայոց երախտագիտութեան, որոշելով Վապուրականի մէջ Վարժապետանոց մը բանալ, տարեկան ծախքին՝ 600 տկի՝ 450ը ինք հայթայթելով: Վարժապետանոցի հակադրութիւնն և մատակարարութիւնը կը յանձնուի Միւսցեալ Ընկերութեան, որու տրամադրութեան տակ դրուած է 200 տկի, նախնական պէտքերու հայթայթման համար: Արեւմտեան Հայոց Կրթական և Բարեգործական այս երկու մեծագոյն Ընկերութեանց գործակցութիւնը ուրախութիւն և բուռնութիւն է, և կը խոստանայ լաւագոյն և հիմնաւոր արդիւնքներ յառաջ բերել:

ՀԱՅ ԱՂԶԿԱՆ ՄԸ ԱՆՅԱՅՏՈՒՄԸ Շապին Գարահիսարի մէջ մեծ յաղում յառաջ բերած է: Դերձակ Միրիճանեան Կարապետի քննին՝ 38 տարեկան Մարիամ, տղու և խելագար, Դեկտ. 25ի շաբաթ օրը Իսլամներու թաղին մէջ անցատագած և հակառակ ամէն հետապնդումներու չէ գտնուած: Յուշման շարժառիթն այն եղած է մանուսանդ որ կառավարիչը ոչ միայն

գործն հետապնդել չէ ուղղած, այլ և Հայոց դիմումները տարրեր նպատակի վերադրած և զօրք ուղղած է կուսակալութեան. կարգ մը կառավարական պաշտօնեաներ ալ կ'ուզին գործը Հայոց վրայ բեռնել, իրեւ թէ խռովութիւն հանել կը ճգնին: Առաջ. փոխանորդ Տ. Վազինակ Ծ. Վ. խնդիրը մանրամասնօրէն տեղեկագրած է Պատրիարքարան:

ԷՋՄԻԱՏՆԷՆ շաբթուա Կ. Պոլսա վերադարձաւ Տ. Մեսրոպ Ծ. Վ. Նշանեան, որ հոգեւոյս Հայրապետին հետ գացած էր, և անոր մօտ մնացած, Երեսուզէմի մէջ տաններկա տարի հաւատարիմ ծառայութեամբ անոր վստահութիւնը գրաւած ըլլալով: Հայր սուրբը, զոր ամէնէն անկողմնակալ տեղեկատուն կ'իմանք նկատել, կը հաւատաւ թէ իրաւ է որ ԷՋմիածնի մէջ կան որոշ խմբակներ, որոնք տարբեր ընտրելիներ ունենալով չէին հաշուած Իզմիրեան Ս. Կաթողիկոսութեան հետ, սակայն Ս. Կաթողիկոսը ոչ ոքի ուղղեցութեան չէր ենթարկուած. տապ խորհելէ ետք մէկ կը գործէր, վանքին մէջ իր վստահութիւնը գրաւող միաբաններու առաջարկներուն իսկ ընդդիմանալով երբեմն: Տ. Մեսրոպ Ծ. Վ. կը հաստատէ թէ ճիշտ է Տ. Կարապետ եպ. ի նամակին դէպքը, որ դառն տպաւորութիւն թողած է սղբացեալ Հայրապետին վրայ. բայց անկախաբար այդ դէպքէն, առանցք հիւանդութիւնը կար իր վրայ և քայքայած էր առողջութիւնը, և բնակահաբար նմանօրինակ յուզումէ մը կ'ազդուէր:

Կաթողիկոսական յառաջիկայ ընտրութեան առթիւ, Տ. Մեսրոպ Ծ. Վ. կը յայտարարէ թէ բացարձակ սուս մըն է թէ Ռուս կառավարութիւնը Թրքահայոց մասնակցութեան իրաւունքը պիտի ղեղչէ: Այսու հանդերձ Ռուսահայոց բաղձանքը, լաւ ևս պահանջումն այն է որ այս անգամ Ռուսահայ եկեղեցական մ'ընտրուի: Իրեւ ընտրելի կը ցուցնեն Տ. Բաղարսոս Վ. Վարդապետանը, որուն բաղձալիմ կարողութեանց վրայ մեծ գովեստով կը խօսուի, և որուն կաթողիկոսացման օրինական արդիւնք չի կրնար ըլլալ, քանի որ

Պայտեմենտի մէջ ընտրելու համար ո՛չ և՛ սխալագոյն բառեր է և ո՛չ բարձրատիճան հոգեւորական, այլ «Եկեղեցւոյ Հովիւ» բացատրութիւնը կայ միայն: Գաղով եկեղեցական տեսակէտին, Ռուսահայերն համոզուած են որ երբ համազգային ընտրութեամբ կաթողիկոս հռչակուի, կարելի է եպիսկոպոսաց միջոցաւ տալ եպիսկոպոս ձեռնադրել զինքը, ապա կաթողիկոս, ինչպէս եկեղեցականներն ըսեալ կայ: Ուրիշ ընտրելիներէ կարողեալ եպիսկ. կորուսած կ'երեւայ ամէն հաւանականութիւն: Սարաճեան Արքեպ. Ի և Օրմանեան Ս. Ի վրայ ալ կը խօսուի, բայց մասնաւոր չըջանալներու ընտրելիներն են անոնք: Տեղակալ Սուրբեանց Արքեպ. Ի մասին եւս զովիստով կը խօսի Տ. Մարտիկ Ծ. Ի., որ կը հաւատէ թէ շանդուցեալ կաթողիկոսին սիրելին եղած է՝ իբրեւ բարի և ազնիւ եկեղեցական, բայց իր վարչութիւնը տանք թող կը դանդն:

ԲՐՕՅ. ՅԱՆՈՒՐԱՆ Հ. ՃԵՃԻՋԵԱՆ, որ բուռնօրէն ժամանակէ ի վեր տկար էր արդէն, տիրութեամբ կ'իմանանք թէ ծանրուպէս հիւանդ է այժմ: Արագ ազդարարուած կը մտթիւնք յարգելի բրօքէպօրին:

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ վերակազմութեան ծրագիրը ուսումնասիրութեան ստարկաց ընել որոշած է Ազգ. Վարչութիւնը:

ԵՒԴՈՒԿԱՅԷՆ Տ. Խորէն քչ. Գալեսեան կը գրէ միզ թէ ընդի նոյն քաղաքացի և այժմ Անվէրո հաստատուած Տիւրք Տիգրան Զամբէրթեան 500 ֆր. ի նուիրատուութիւն մը բրած է տեղւոյն անկեղանցի յատուկ շինութեան մը ի նպատ: Եւդոկիոյ Աղքատախնամ Հոգաբարձութեան կարգադրութեամբ և ի նշան շնորհակալութեան Յուն. Զի կիրակի առաւօտ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ յատուկ Ս. Պատարագ և հագնանդիստ կատարուած է աղնիւ նուիրատուին ննջեցեալներուն ի յիշատակ: Գո՛ւթեամբ կ'արձանագրենք այս նուիրատուութիւնը՝ իբրեւ գրգռ հեղաւոր երկիրներ հաստատուած աղնիւ Հոյերու, միշտ յիշելու իրենց ծննդավայրը և Զերմ սիրով կապուած միտլու աշոր հետ:

ԲԱՐԵՍԻՐՈՒԹԵԱՆ ուրիշ զոհացուցիչ լուր մը կուգայ միզ Պոլսոյ մէկ տուարձանէն՝ Խաղաղիւզէն: Ամերիկա հաստատուած ընդի Խաղաղիւզի ազգային մը որ սնունդը գաղանի կը պահէ, ժամանակէ մը ի վեր ամէն ամիս տասը ոսկի կը զրկէ իր ծննդավայր թաղը, կարօտեալներու բաժնուելու համար, որոնցմէ առնուած ստացագրերը կը զրկուին իրեն: Նոյն բարեգոր կը խոստանայ միշտ շարունակել իր նուիրատուութիւնը: Գովելի օրինակ մը ծննդավայրի սիրոյն, աւետարանական ուղիով մը ի գործ դրուած:

ԲԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ — Անցեալ կիրակի, (Յուն. 23) Պէշիկթաշի Ս. Եկեղեցիին մէջ Տ. Մաղաքիտ Նալ. Տէրունեան քահանայ ձեռնադրեց Տաճարի վարչական պաշտօնեայ և Ներշուկայի Ներսէս գիւղացի Պ. Արշակը նոյն գիւղին վրայ, անուանելով զայն Տ. Արսէն քահանայ: Նորընծայ քահանան, պարկեշտ, ուղղամիտ և զարգացման հետամուտ, կը յաւանք թէ օգտակար պիտի կրնայ ըլլալ իր ծննդավայր գիւղին: Կը մտթիւնք ըլլալ «Մշակ առանց ամօթոյ»:

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՅ Ընկերութիւնն այս անգամ հրատարակած է երկամեայ չըջանին տեղեկագիրը, իր գործունէութեան պայծառ համարատուութիւնն ընկողով, և աւելի՛ եւս հանրային համակրութեան առարկայ դարձնելով ձեռնարկած աղնիւ գործը: Տեղեկագրին պատկերները միայն (*) աչքէ անցնել բաւական է, մասնաւորապէս Կիլիկիոյ կողմը ծնողազուրկ մատառի ազնուակներու վայելած մայրական հաղածութեան վրայ գաղափար մը կազմելու համար: Համառօտիւ պատմուելէ ետքը նոյն Ընկերութեան 1879 ին Սկիւտարի մէջ հիմնարկուելու և մինչեւ 1893 շարունակելու պարագաները, կը յիշեցուի այդ թուականին Ազգանուէրի գործունէութեան վերջակէտ դրուելու արուր հար-

(*) Լեւոնաձեւ Լեւոնի բերդը, Սոյո մայրաքանդակ և իր աշտարակները, Հաճըն և Տէօրթ. Եօլի տեսարանները, Ընկերութեան խնամած որբուհիները՝ զանազան վարժարաններու և որբանոցներու մէջ, Էլն. Էլն.

կը, երբ պարտանդէսէ տեղացած 120
ոսկին Ազգային Պատրիարքարանի յանձ-
նելու հարկ ծաղած է, զուտ մը որ
1908 ին աղտոտութիւն հաշակուելէն ետքը՝
170 ոսկիի բարձրացած, Բնկերութեան
երկրորդ անգամ գործի ձեռնարկելուն
նախնական դրամագլուխը կ'ըլլայ: Բրանի-
կի մը սահմանափակ տողերը թողատու
չին ընդարձակօրէն մանրամասնելու տե-
ղեկագրին սրբաւնակութիւնը: Բաւական
է յիշեցնել թէ Բնկերութիւնը, հաղիւ եր-
կու. տարիէ ի վեր նսրէն սկսած իր օգ-
տակար գործաւնութեանց, արդէն իսկ
երեսունէ աւելի վարժարաններ ունի
հոգածութեանը տակ, Հայաստանի և Կի-
լիկիոյ զանազան քաղաքներուն և գիւ-
ղերուն մէջ, տարեկան ընդհ. ծախք ու-
նենալով մօտ 2000 ոսկի, որուն աւելի
քան 1300 ոսկին կը հաշիւուի իւր լաւա-
նորդներէ, հանգանակութիւնէ, գաւառներէ
տրամադրուած գումարներէ եւն.: Հետե-
ւաւորէս մօտ 700 ոսկիի բաց մը կը մնայ,
զոր կը յուսացուի գոցել կաղձակերպելի
սրբաւնակութիւնէ: Ժողովրդեան վրայ նաեւ
բական պարտականութիւն մը կը ծանցա-
նայ ջերմ գութաւորանքով մը շրջապատել
Ազգայնաւէր Հայուն հոգի վերականգնող այս ազ-
նիւ գործը, որ նպատակ ունի սոցաւովել
գաւառի Հայուն հինքերու հիմնական գաւա-
տորակութիւնը:

Մասնաւոր հնորակալութեան արժանի-
կն այն ազնիւ Տիկնայք և Օրիորդք, որ
քառորդ դար առաջ իրենց ծաղկաւոր տա-
րիքին մէջ այնքան եռանդով աշխատե-
ցան զորքը հիմնելու կը շարունակեն առաջ
առնել նոյնքան երիտասարդական աշխու-
ժով, և ապահովաբար աւելի՛ հասուն եւ
լաւջ գործունէութեամբ մը:

ՀԱՄԵՐԱՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ զեղե-
ցիկ լուր մը կը հաղայ Մարաշէն: Մեր թըղ-
թակիցը կը գրէ թէ «Տոհմային կրթութիւնն
ընդհանրացնելու, 30 տարիէ ի վեր շարու-
նակող Ազգ. Կեդր. Վարժարանին կրթու-
կան մակարդակը բարձրացնելու, և երեք
հազուածներու միջև սիրայ և համերաշ-
խութեան ոգին ամրապնդելու համար
վերջապէս կարելի եղած է միացնել Ազգ.

Կեդր. վարժարանը և Հայ բողոքականաց
Ակադեմիան: Դպրոցական տարեշրջանէն
սկսեալ, կարող ուսուցիչներու խմբակցու-
թեան տակ կը կառավարուի: Այս տար-
ւան համար 300 Օսմ. ոսկի պիւտճէ մը
որոշուած է: Ծրագիրը Մարաշի Իսախան վար-
ժարանին հաւատար ըլլալով, գալ տարի
հաւանաբար Հալէպի Իսախան լարձրու-
թիւնը պիտի ունենայ: Միացեալ Ազգային
Կեդրոնական վարժարանն ունի 9 անդամէ
բաղկացեալ Աւսումնական Խորհուրդ մը.—
Առաջն. Փոխ. Արթ. Տ. Մահալ Բահանայ՝
նախագահ, Վեր. Կարապետ Յարութիւն-
եան՝ Աստեղագիտ. Արթ. Տ. Հմայեալ Բն. Ա-
ստեղագիր, Տքթ. Գալուստ Նաճարեան՝
Գանձապատ. Վեր. Սարգիս Շիրէճեան,
Տքթ. Յարութիւն Տ. Ղազարեան, Տքթ. Գ.
Վարդապետեան, Սողոմոն Ոսկերիչեան և
Սեդրաք Տիշչէքէնեան: Վարժարանն ունի
առայում 150 իմաստ ուշտիրա, 5 դասարան:
Հայերէն և Թուրքերէն լեզուներէն զատ,
Անգղերէն և Գաղղիերէն ալ կ'աւանդը-
ւին: Կիլիկիոյ մէջ յարանաւանութեանց հետ
իր վարժարանը միացնողը Մարաշ եղած է.
Կը յուսանք թէ Տոհմ Կիլիկիոյ Վիհ. Հայ-
րապետը, և Կ. Պոլսոյ Միացեալ Ընկերու-
թիւնը իրենց հովանաւորութեան տակ աւ-
նելով, իրենց նիւթական ու բարոյական ա-
ջակցութիւնը չպիտի զանան:

ՄՐՏԱՃԱՄԼԿ ԼՈՒՐԵՐ ԱՆՏՈՒՔԷՆ

Անտիոքի Հայոց առաջն. փոխանորդ
Տ. Վաղարշակ քհ. ճէրանեան խմբա-
գրութեանս ուղղուած թղթակցութիւնով
մը արտաճմիկ նկարագրութիւն մը կ'ընէ Կի-
լիկիոյ այդ հարուածեալ քաղաքի Հայու-
թեան թշուառ վիճակին: Ծննդեան տնա-
կան օրերը, որ քնդհանրապէս հազեկան
աքախութեան օրեր են Հայ—քրիստոնե-
ային, տխրութեան և բաց ու կոծի չըջան
մը եղած են այնտեղի սրբերուն և այլի-
ներուն համար: «Տարաբախտ այրինքը և
ջարդէ մաղաղուր ազդեցութեամբ այրերը, կը
գրէ Տէր Հայրը, երկեւզածութեամբ կը
գիւնին եկեղեցի, մսխտարուելու համար

հուկույէս : Սակայն կ'երեւակայուի՞ տր-
դեօք ինչե՛ր քաշեցինք Տնօրէնէքի առ-
թիւ . ո՛ր տուն մտնես, լաց ու կոծ :
Այրիներէն մէկը կ'ողջայ իր տմուշնը,
միւսը իր աղան, ուրիշ մը իր կտրիճ կզ-
բայցնելը, և ուրիշ մըն ալ կը սկսի համ-
րիլ իր դժբախտ պարագաները, որ եր-
բեմն կը յանգին մէկէ աւելի տառնեակնե-
րու : Խթման երեկոյնն այրիներէն մէկուն
տունը անցայ, տեղւոյս երեւելիներէն Սե-
րսը էֆօ . Գլըճճեանի այրին, որու տմու-
շնը և տառնեակնի տմուշայ զուտկը՝ Գէորգ՝
խժվժաբար ուղաննուած են : Տարաբախտ
այրին, թաղանէն ազատուած անպէտ
զոյքերէն՝ ամուսնոյն մէկ ատրաստ և
լուսանկարն առջին առած, կուլար դառ-
նապէս . ջանացի սխտիկ գինքը, խրատե-
լով որ դնէ իր երկու անշտիտահա որբու-
հինքը մեղքնայ, որոնք կը հեծէին իրենց
թշուառ մօրկան հետ : Նամակագիր քա-
հանան տխուր վերջուշումը կ'ընէ մօտ
երկու տարի տառնուած անաւոր կոտորու-
մին մանրտեսան պարագաներուն, որոնց
կրկնութեան երկիւղին մէջ է միշտ տեղւոյն
տի մը Հայու թիւը : Այդ ահուտ որե-
ւէն՝ 70-80 տուն Հայերէն հաղիւ 10-13
հոգի մաղապուր աղատած են, և աղե-
կաւոր պարագաներու մէջ կենդանու և
զած է այն ժամանակ պաշտօնավարող Տ.
Արմենակ քչ . Տոնաթոսեան, իր 18 ամեայ
զուտկը աչքին առջեւ չարաչար սպան-
նուելէ ետք :

Ընդհանրապէս անոք որբերէ և այրի-
ներէ բաղկացեալ այս ափ մը թշուառ
ժողովրդեան հոգեւոր հովուութիւնը կը
վարէ Տ. Վաղարշակ քչ . Ճէրրահեան,
բնիկ Զէյթունցի, հաղիւ երկու քուկէս տա-
րիէ ի վեր քահանայ ձեռնադրուած, և
ինքնապարգայեան չնորհիւ յառաջացած
հոգեւորական մը, որ անցեալ Վարդապե-
տին փակեալ և պղծեալ եկեղեցւոյ օծումը
կատարած է : Տարաբախտ այրիները բո-
լորուած են եկեղեցւոյ բզորափքը, խի
ոսկաւաթիւն այդ մարդիկ գեւ կը բնակին
Յունաց թաղը, առ ահ : Հալէպի տառն-
նորդ Գեւ . Տ. Շահէ վրդ . երկիցս այցե-
լած է Անտիօք և չըմակաները, և միւ-

թալած : Եկեղց . զգեստներէ, անօթներէ
ևն . զրկուած ըլլալով, հետզհետէ Պատ-
րիարքարանէն և Կիլիկիոյ Կաթողիկոսա-
րանէն հասած օգնութիւններով կարելի
եղած է քիչ շատ այդ պէտքերը լրացնել,
և այժմ կը պակսին՝ ի մէջ այլաց՝ երկու
Ձայնքաղ Շարական : Վերջերս կարելի և-
զեր է ուսուցիչ մըն ալ զրկել, Մարաշցի
Պ . Արտաշէս Չարխափանեան, հմուտ
եկեղց . երգեցողութեանց ալ, բրուն ամէն
կիրակի անձնութեամբ կ'օժանդակէն Այն-
թաղցի երկու պատուաւոր վաճառական-
ներ, տեարք Յովհ . Տ. Ղազարեան և Մհ .
Յովսէփ Հաւրճեան : Վարժարանը կը յա-
ճախեն 35-40 երկսեռ աշակերտներ :

Նամակագիր Տ. Հայրը, տեղւոյն ժո-
ղովրդեան նիւթականին հետ՝ քարոյական
կացութիւնն ալ շատ թշուառ գտած
է : Ուստի ամէն կիրակի սովորութիւն
բրած է հոգեւոր և աւետարանաւոր քա-
րողներով սխտիկ և սրտապնդել ժող-
վուրդը, որ սկսած է սիրով փորթիլ եկե-
ղեցիին ուրիշ ուժացած էր, և տէրուա-
կան օրը կը լեցնէր զրօսարանները : Գշ .
օրերն ալ յատկապէս այրի կանանց համար
քարոյներ կը խօսի իրենց հասկնալի լե-
զուով բացատրելով Աստուածաշունչը՝
հետզհետէ՝ առաջին էջերէն սկսելով : Այս-
պէսով կարելի եղած է հոգեւոր արթնու-
թիւն մը և սրտապնդում մը յառաջ բե-
րիլ ժողովուրդին մէջ, որմէ շատ զո՛ն է
նամակագիրը, և յուսուցիչ է լուսավոյն
արդիւնքներու :

Գոհունակութեամբ կ'արձանագրենք
այս տեղեկութիւնները, որոնք կը ցուցնեն
թէ պարտաճանաչ քահանայ մը ինչեր
կրնայ բնել իր փոքրիկ հօտին համար :

* Յունվար 8ի Եր . տոտուն Սիւվէյ-
տիէի հոյաքնակ Համի Հոսրիպի գիւղի
Տ. Արսէն քչ . Տ. Առաքելեան յանկուր-
ժաման եղեր է, աւաւօտեան ժամերգու-
թիւնը կատարելէ ետք : 60-65 տարեկան
էր, և մօտ 30 տարի տառն քահանայ
ձեռնադրուած : Պաշտօնավարած է նաեւ
Անտիօք, Իսկէնուէրուն ևն . :

ԿԱՐԵՒՈՐ

Թերթիս վարչական նախորդ պաշտօնեայ Պ. Արեակի Բահանայ ձեռնադրուելուն առթիւ՝ պաշտօնեայի փոփոխութեան, նաեւ սպարանի փոփոխութեան եւ անոր յարակից կարգադրութեանց հետեւանօք, «Տանար»-ի ներկայ բիւիճ հրատարակութիւնն ուր օրուան յապաղում մը ունեցաւ:

Այս պատճառաւ ներկայ բիւր ուր եջ յաւելուածով Բսան եւ Հարս եջ կը հրատարակուի: Յառաջիկայ բիւր պիտի հրատարակուի Փետր. 12-ի շաբաթ օրը, եւ այնուհետեւ՝ ամեն շաբաթ կանոնաւորաբար: Պակաս հրատարակուած բիւր ամբողջացուցած ըլլալու համար, յառաջիկայ բիւրով մը եւս ուր եջ յաւելուած մը տալ լիւր եմք:

★

Անգամ մը եւս կը յիշեցնենք մեր բոլոր ընթերցողներուն քե «Տանար»-ի բաժնեգիրք՝ Թուրքիոյ մէջ՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց համար, հաւասարապէս, առանց բացառութեան, ՔԱՌԱՍՈՒՆ ղրբ. Է տարեկան: Թերթին նիւթականը ձեռնտու չէ ու եւ զեղջ քնելու այս կամ այն դառակարգին:

Միւս կողմէ կը յիշեցնենք հեռաւոր քե մերձաւոր բոլոր Պատ. բաժանորդներուն, քե բաժնեգիրքները կանխիկ եմ. հետեւապէս կը խնդրենք որ, իրենց տարեկան բաժնեգիրք հանին ղրկել կա՛մ ուղղակի բերթիս տնօրէն-խմբագրին հասցեին, եւ կամ վնարել իրենց գտնուած Բաղափ մեր Պատ. գործակալներուն, ան խափան շարունակուելու համար բերթին առաքումը:

★

Բրոժ. Յ. Հ. ձեռնագրեան ԷՖ. հիւանդութեան պատճառով չէ կրցած խմբագրութեան հասցնել իր ուշագրաւ յօդուածին շարունակութիւնը:

ԿՈՉ ԱՌ ԲԱՐԵՍԷՐՍ

ձշմարիտ կրօնի գաղափարը վառ պահելու եւ հասարակական դարգացման ու կրթական գործին՝ իր ուժերու ներած տաճարին մէջ օժանդակելու նպատակով կազմուած քաղաքիս (Երզնկա) կրօնատիրաց միութիւնն կը դրայ պէտքն ու կարելութիւնը իր նպատակին համակիր ու զայն՝ լուսաւարող օրաթերթերու, պարբերականներու եւ գրքերու:

Իր կազմակերպութեամբ ու ընդարձակ գործունէութեամբ այս անդամակի շրջանին մէջ, սակայն, ցուալի է որ մեր նիւթական միջոցները միայն տեղական անհրաժեշտ պէտքերու եւ պահանջներու գոհացումին հաղիւ կը բաւեն: Ուստի կը խնդրենք այս նպատակին համակիր օրաթերթերու եւ պարբերականներու Պատ. խմբագրութիւններէն եւ մեր տնտեսաւոր ազնիւ քաղաքացիներէն, որ մեր համայնքին գրեական-մտաւորական սոյն պէտքը գոհացնելու բարի ու իրապէս ուղեւորական գործին չզլանան իրենց ընել կըրցածը:

Մենք գոհանակութիւնով ու շնորհակալութիւնով պիտի յիշենք նուիրատուներն ու նուէրները:

Նուէրները կրնան ղրկուիլ հետեւեալ հասցեով, խաչատուր ԷՖ. Աստուրեան՝ Երզնկա:

Դիւան վարչ. ժողովի կրօն. Միութեան

Երզնկա Առեւտրաւոր Առեւտրային

Հ. ԹԱԴԻԿԵԱՆ ԳԻՍԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ի. ԽՄԲ. — Խմբագրութիւնն, Է պատասխան այս կոչին, կը նուիրէ մէկ տարեկան ՏԱՃԱՐ՝ ղրկելով որոշեալ հասցեին:



ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՐԱՅԵԱԿ ԲՆԵՔ. ԷՐԱՅԻՐԱՅԱՆ

ՏՆՈՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐԱՄԱՅԻՐ ԲՆԵՔ. ԿԷՋԻՐԱՅԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՇԱՆԹ»

Դալաթիա, ձմեռ Գաբուսու, Թիւ 9

“ՀՈՐԻԶՈՆ,,

Գրական հասարակական եւ քաղաքական թրաքեր

Կը հրատարակուի մշտական աշխատակցութեամբ Ղազարա Սեդակեանի, Յովհ. Թումանյանի, Լէօի, Շիրվանդատէի եւ ուրիշ տանայ ու թրքական լուսագոյն գրողներու : Հորիզոն իր հիմնարկութեան առաջին երկու տարիներուն նշանակելի տեղ մը գրուած է արդէն կազմատանց լրագրութեան

մէջ, եւ երբորդ տարին թեւակոխած է լուսագոյն ու ժերով օժտուած : Տարեկան բաժնեկին Թուրքիայ համար՝ 120 դր. : վեցամսեայ 70 դր. : եւրոպա տարեկան 30 ֆր. : վեցամսեայ 18 ֆր. : Հասցէ՝

Rédaction «Horizon», TIFLIS,
[Russie, Caucase]

ԱՆՆԱԽՆՔԱՅ ԱՌԻՔ ՄԸ



Ընթերցումը ծաւալելու եւ ընթերցողներու դիւրութիւն մը բնծայելու համար, հետեւեալ գիրքերը կը ծախուին անհաւասարի գեղջով մը .

33,75 ՂՐՈՒՇԻ ՓՈԽԱՐԷՆ ՄԻԱՅՆ

20 ՂՐՈՒՇ ՎՃԱՐԵԼՈՎ

ՊԵՏԻ ՈՒՆԵՆԱՔ

ՏՈՒՓ ՄԸ ԱՅՅԱՐԱՐԹԻ հետ, որ կ'արժէ
 "ՄԵՐ ՏԱՐԵՅՈՅՑ", ք Ա. Տարի, պատկերազարդ ճոխ հաւաքածոյ
 "ՄԵՐ ՏԱՐԵՅՈՅՑ", ք Բ. Տարի, " " " " " "
 ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ, Նորավէպեր, ԵՐ. ՍՐՄԱՔԷՇԱՆԼԵԱՆԻ " " " "
 ՆՆՐԱՇԵԱՐԷ ՆԻ ԸՆԷ. (Երգիծական տետր մը) ՓԱՅԼԱԿԻ " " " "
 ԿԱՊՈՒՏԻԼԸ (վէպ) ԺԻԼԻ, Թրդ.Ս. ՏԻԿԻՆ Ժ. ՍԱՅԱՊԱԼԵԱՆԻ " " " "
 ՀՈԳԻՒ ԵՐԱՆԳՆԵՐ (Բանաստեղծութիւն) ՊԵՐՃՈՒՅԻ ԵԱԶԸՃԵԱՆԻ " " " "
 ՀՍԿՈՒՄԸ (տաւր մէկ արարուածով) ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ " " " "
 ԱՌԱՋԻՆ ՄԷՐԸ (վէպ) ՓԱՅԼԱԿԻ " " " "

10	Ղրուշ
5	"
5	"
4	"
0,50	"
3	"
1	"
1,25	"
4	"
33,75	դրուշ

ԳԱՒԱՌԻ ՀԱՄԱՐ 25 ՂՐՈՒՇ

Դ Ի Մ Ե Լ

ՏՊԱՐԱՆ ՇԱՆԹ

ՂԱԼԱԹԻԱՆ ԺԱՄԻ ԳՍԲՈՒՍՈՒ, ԹԻՒ Գ.

